Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

22787

Արհեստակցական
Միությունը ԽՍՀՄ կառուցող
բանվորների : Հայաստանի
կենտրոնական վարչություն

Համառոտ հաշիվ գործունեության

Библиотека Института Востоковедения Академии Наук СССР

1931

21

331.1
Ա-89

CA 32-И / 97

# ԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ

§ 1.

Սույն Հավաքական պայմանագիրը կնք-
ւմ է մեկ կողմից Հայաստանի կոոպերացող
նդամների անունից՝ Կոոպերացիաների Արհ-
իության Կենտրոնական Վարչության, որը
Հետագայում կոչվելու է «ՄԻՈՒԹՅՈՒՆ»՝
նձին Արտադրական և աշխատավարձի
բաժնի վարիչ՝ ընկ. Ցերեմ ՄԱԼԽԱՍՅԱՆԻ
յուս կողմից Զարտգեսի և Բանաքեագե-
. կենտ. Վարչության՝ հանձին ընկ. Ա.
ԱՄԱԼՅԱՆԻ միջև, որը Հետագայում
չվելու է «Զարտգեսի Վարչության»:

§ 2.

Սույն Հավաքական պայմանագրի նպատակն
ապահովել բանվոր դասակարգի առաջ-
ված խնդիրների ավելի քան արագ կերպով
ուծումը՝ ժողովրդական տնտեսության վե-
րականգնման, յերկրի ինդուստրացման և
ուղատնտեսության սոցիալիստական վերա-

05 FEB 2014 22787

կառուցման բնագավառում և անշեղօրէն ու արագ կերպով բարելավել ՀՍԽՀ կառուցող բանվորների և ծառայողների նյութական, կուլտուր-կրթական և սոցկենցաղային պայմանները:

§ 3.

Ըստ սույն Հավաքական պայմանագրի 2-րդ կետի, Զորագեսի և Քանաքեռգեսի Վարչության միջոցով կատարվող շինարարական աշխատանքներում գրավված վարչատնտեսական կազմը և բոլոր ճարտարապետ-տեխնիկ աշխատավորները իրենց վրա պարտավորություն են վերցնում լրիվ կերպով կատարելու և գերակատարելու 1931 թ. արդֆինպլաններով նախատեսված քանակական և որակական ցուցանիշները՝ արտադրության պրոցեսների ճիշտ կազմակերպմամբ, հարվածային աշխատանքների մեթոդի կազմակերպմամբ, պրոլետարական դիսցիպլինայի ամրացմամբ և ունենալ կոմունիստական վերաբերմունք դեպի աշխատանքները. դրա հետ միասին Տնտ. մարմինը պարտավորվում է ապահովել անհրաժեշտ արտադրական պայմանները՝ այդ խնդիրներն ի կատար ածելու, ինչպես և պարտավոր է անպայման և իր ժամանակին կատարելու սույն պայմանագրի բոլոր կետերը՝ աշխատավարճի կարգավորման, աշխատանքի իրավական պայմանների վերաբերյալ, միաժամանակ աջակցելու, բարելավելու բանվորների կուլտուրական, սոցկենցաղային և բնակարանային պայմանները:



ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
56767.6

§ 4.

1931 թ. Վարչությունը պարտավորվում է կիրառել հետևյալ միջոցառումները՝

ա) Տնտեսական տարվա առաջին իսկ ամսից, ապահովել արտադրության զարգացումը, համաձայն արդֆինպլաններով նախատեսված չափի:

բ) Սույն պայմանագիրը ստորագրելուց 15 օրվա ընթացքում արդֆինպլանը հասցնել կառուցվող շենքերին, գործարաններին և ցեխերին, իսկ 20 օրվա ընթացքում հասցնել այն մինչև ագրեգատը, ստանոկը և անհատ բանվորը:

գ) Արդֆինպլաններով նախատեսված ռացիոնալացման միջոցները կիրառելու հետ զուգընթաց, պարտավոր է տնտեսական տարվա ընթացքում կիրառել նաև այն միջոցները, որոնք կառաջադրվեն բանվորների, ճարտարապետ-տեխնիկների և ուրիշների կողմից, օժանդակելու պլանների գերակատարմանը, միևնույն ժամանակ, առանց հետաձգելու, կի-

բանել կյանքում բանվորների գյուտարարությունները:

դ) Սույն հավաքական պայմանագիրն ստորագրելուց 15 օրվա ընթացքում վերանայել գործադրվող շինանյութերի, հումույթի, վառելիքի և էլեկտրաէներգիայի չափը և կազմակերպել ներքին հսկողություն՝ վերածված նորմաներով կատարման և նյութերի ու պատրաստված գործերի վորակը ստուգելու համար:

ե) Կազմակերպել պլանային աշխատանք՝ կորուստների դեմ պայքար մղելու, թե արդյունաբերության և թե շինարարության մեջ:

զ) Տասնհինգ օրվա ընթացքում մշակել հրահանգ տասնապետների, ցեխային վարպետների և նրանց ոգնականների իրավունքների ու պարտականությունների մասին, միանձնյա ղեկավարության սկզբունքը կիրառելու նպատակով, միաժամանակ ուժեղացնել վարչական և տեխնիկական աշխատավորների պատասխանատվությունը, թե շինարարության վրա և թե գործարաններում դրված բանվորների մեջ, իրենց հանձնարարված աշխատանքները կատարելու հանդեպ:

է) Ապահովել սույն պայմանագրով նախատեսված բոլոր աշխատանքների կատարումը, ժամանակավորապես աշխատավարձի աշխատապաշտպանության պայմանները և աշխատավորների աշխատանքի պայմանների առողջացման գործը:

ը) Վոչ ուշ, ամեն ամսի 25-ից տալ հետեյալ ամսի արտադրական աշխատանքի պլանը բոլոր ցեխերին և ամեն մի հնգօրյակի սկսվելուց առաջ նույնը տալ բրիգադներին և բանվորական ավելի փոքր միավորներին:

թ) Արդֆինպլաններով նախատեսված ռացիոնալացման միջոցների գործադրելու հետ զուգընթաց, անպայման գործադրել նաև այն միջոցները վորոնք սույն պայմանագրի գործելու ընթացքում կառաջարկվեն բանվորների և ճարտարագետա-տեխնիկ. աշխատակիցների կողմից և վորոնց առաջարկները հավանություն գտած կլինեն Վարչության կողմից:

ժ) Կազմակերպչական և տեխնիկական ոժանդակություն ցույց տալ հետագայում ավելի ևս ծավալելու և ամրացնելու սոցմրցումը և հարվածայնությունը:

ժա) Մինչև 1931 թ. մարտ ամսի 1-ը կազմակերպել պլանային հետախուզական աշխատանքներ՝ տեխն. արտադրության ռացիոնալացման, արտադրողականության բարձրացման և աշխատանքները նորմիրովկայի յենթարկելու նպատակով:

ժբ) Կառավարության նշած ժամանակամիջոցում մշակել ստուգիչ թվեր և ուղարկել տեղերին վոչ ուշ փետրվարի 1-ից:

ժգ) Ապահովել շինարարական աշխատանքները ամբողջ տարվա ընթացքում, ստեղծել մըշտական բանվորական կադր և ուժեղացնել աշխատանքների մեքենայացումը և ստանդարտիզացիա մտցնել շինարարության մեջ. շինարարական ժամանակի ամբողջ ընթացքում, շինանյութերի անընդհատ մատակարարումը, բանուժի ռացիոնալ ոգտագործումը, ինչպես և ներքին միջոցների ոգտագործումը:

ժդ) Սոցմրցման և հարվածայնության հետագա զարգացման համար միջոցներ ստեղծել, առաջին հերթին տալով հարվածայիններին ամենալավ հանրակացարանները և արտադրության մեջ աշխատելու լավ հնարավորությունները:

ժե) Բաց թողնել անհրաժեշտ միջոցներ բանվորների վորակը բարձրացնելու համար:

ժզ) Կատարել ճիշտ և կանոնավոր հաշվառում սոցմրցման, արտադրողականության բարձրացման, ցուցադրելով ստացված էֆֆեկտները:

ժէ) Հատկացնել պարգևատրման համար ֆոնդ.........գումարի և պարգևատրել արժանիներին:

Ծանոթություն.—Տնտմարմինները պարտավոր են կազմակերպել հարվածային բրիգադներ այն հաշվով, վոր համապատասխան վորակի խմբեր կազմակերպվեն:



Ծանոթություն.— Շինարարական հետ ընկած կարևոր միավորներին ոժանդակելու համար Վարչությունը և Տեղկոմը պարտավոր են կազմակերպել հարվածային բրիգադներ, տվյալ շինարարության լավագույն հարվածայիններից:

## ԳՈՐԾԱՐԿՈՄԸ ՊԱՐՏԱՎՈՐ Ե

ա) Վճռական կերպով ամրապնդել աշխդիսցիպլինան, պայքարել պրոգուլների, պոկոպականության դեմ, աշխդիսցիպլինան խախտողների և բանուժի հոսունության դեմ:

բ) Պարբերաբար հսկել արդֆինպլանի կատարման քանակական և վորակական ցուցանիշներին, վորի համար յենթարկել մոբիլիզացիայի ձեռնարկության ամբողջ բանվորությանը, սոցմրցման և հարվածայնության ծավալման և ամրացման, ինչպես և արտադրական խորհրդակցությունների ու գյուտարարության միջոցներով:

գ) Գործարանի Վարչության հետ միասին կազմել և պարբերաբար ինֆորմացիա տալ բանվորությանը սոցմրցման և հարվածայնության ընթացքի մասին: Գործնական ոժանդակություն ցույց տալ Վարչությանը, հետա-

մնաց չինարարական մասերին ոգնելու գործում, վերացնելով արդֆինպլանների իրագործման բոլոր դժվարությունները։

դ) Իրագործել և կազմակերպել մասսաների հսկողությունը յերկու կողմերի վրա ևս, սույն հավաքական պայմանագրի համաձայն, նրանց հանձնարարած պարտավորությունների ճիշտ կատարման համար ձեռք առնելով ամեն տեսակի միջոցներ, պայմանը խախտող կողմերի և անհատների վերաբերմամբ։

Կողմերը պարտավորվում են պլանի կատարմանը վորևէ վտանգ սպառնալու դեպքում, միասին ձեռք առնել կոնկրետ միջոցներ՝ արդֆինպլանների կատարման ամեն տեսակի խոչընդոտները վերացնելու և նրա կատարումը ապահովելու։

## ԳՈՐԾԱՐԿՈՒՄԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է

Հարվածային բրիգադաներին պարբերաբար հրահանգել և ղեկավարել, ՃՏՍ-ի միջոցով կազմակերպել հարվածայինների և սոցմրցման մասնակցողների համար տեխնիկական ոժանդակություն։ Կազմակերպել խմբակային արտ. խորհրդակցություններ և ճարտ.-տեխնիկ. աշխատավորների ու Վարչության մասնակցությունը այդ խորհրդակցություններում ապահովել։ Ճարտ. տեխնիկական աշխատավոր-



ներն էլ իրենց հերթին պարտավոր են իրենց խմբակների արտադրական խորհրդակցություններին մասնակցել թե անհատապես և թե խմբակի հետ միասին, մրցման մեջ մտնել արտադրական խնդիրները և ռացիոնալացման աշխատանքները լավագույն կերպով կատարելու համար։

Ճ. Տ. բոլոր աշխատակիցները, բանվորները և ծառայողները, վորոնք ավարտել են այս կամ այն վորակավորման դասընթացները, պարտավոր են տվյալ ձեռնարկություններում աշխատել վոչ պակաս 2 տարուց։

§ 5.

Բանվորներն ու ծառայողներն իրենց հերթին պարտավոր են՝

ա) Միանգամայն վերացնել առանց հարգելի պատճառների կրկնող պրոգուլները, լրիվ ոգտագործել բանվորական որը, ձգտել գերակատարելու տրված արտադրական պլանը, միաժամանակ լավացնելով գործի վորակը։

բ) Կահավորությունները և գործիքները լավ պահպանել, տնտեսաբար գործածել հումույթը և նյութերը, թույլ չտալ սահմանված չափից ավելի ծախսել բանուժը, նյութերը, հումույթը և այլն։

գ) Ամեն կերպ բարձրացնել արտադրության

վորակը, բարեխիղճ վերաբերմունքի շնորհիվ վերացնել բրակը և փոխադարձ հսկողություն ունենալ միմյանց վրա:

դ) Վարչության կարգադրությունը ժամանակին կատարելով, աջակցել միանձնյա ղեկավարության սկզբունքի կիրառմանը:

ե) Պարբերաբար բարձրացնել իր վորակը, հաճախելով պոլիտեխնիկական դասընթացներ, կուրսեր, խմբակներ և այլն:

զ) Անպայման կատարել ներքին կարգապահության կանոնները:

է) Մինչև տարվա վերջը իր ցանկությամբ չթողնել գործարանը, ձեռնարկությունը կամ շենքը և պայքար տանել շուտ շուտ տեղից տեղ փոխադրվողների դեմ: Բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը 33 տոկոսով, ինքնարժեքը իջեցնել 11,5 տոկոսով և աշխատավարձը 4 տոկոսով բարձրացնելու համար:

ը) Վերացնել բանվորների մեղքով առաջացած բրակ աշխատանքները:

§ 6.

Սույն հավաքական պայմանագիրը տարածվում է Զորագեսի և Քանաքեռագեսի միջոցով կատարվող բոլոր շինարարություններում աշխատող բոլոր բանվորների և աշխատավորների վրա և թե պայմանագրերի գործելու



ընթացքում նոր ընդունվողների վրա, ինչպես և նույն ժամանակաշրջանում նոր սկսվելիք ձեռնարկությունների վրա, անկախ վարձելու ժամանակամիջոցից:

**Ծանոթություն.**—Չի տարածվում ժամանակավորապես աշխատավորների վրա, բացառությամբ արձակուրդ գնացողների և հիվանդների տեղը աշխատողների վրա՝ պայմանագրի փոխարեն տարածվում են գործող օրենքներ: (Կենտգործկոմի և Ժող. կոմխորհի 1927 թ. հունվարի 14-ի վորոշումը):

Շինարարության մեջ աշխատող մնացած բոլոր աշխատավորների վրա սույն պայմանագիրը տարածվում է, նույնիսկ յեթե նրանք վարձված են ժամանակավորապես:

§ 7.

Ժամանակավոր աշխատավոր վարձելու դեպքում, Վարչությունը պարտավոր է գրավոր ձևով հայտնել աշխատողին ժամանակամիջոցի մասին:

§ 8.

Հավաքական պայմանագիրը կնքվում է մեկ տարի ժամանակով, սկսած 1931 հունվարի 1-ից մինչև 1931 թ. դեկտեմբերի 31-ը: Այս պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրից սկսած,

29-30 թ. նախկին պայմանագիրը կորցնում է իր ուժը:

§ 9.

Պայմանագրի գործածելու ժամանակամիջոցում նրա առանձին կետերը կամ մասերը կարող են փոփոխության ենթարկվել միմիայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

Հետին թվով չի թույլատրվում այնպիսի փոփոխություն մտցնել սույն պայմանագրի մեջ, որ վատացնում է աշխատանքի պայմանները:

Եթե մինչև սույն պայմանագրի ժամանակամիջոցը լրանալը նոր հավաքական պայմանագիր չի կնքվում, բանվոր-ծառայողների աշխատանքի պայմանները կարգավորվելու յեն սույն պայմանագրով:

Աշխատանքի պայմանների բարելավումը, որ նախատեսվելու յե նոր պայմանագրի մեջ, ուժի մեջ է մտնելու նոր պայմանագրի գործելու օրից:

## ԿԱԴՐԵՐ

§ 10.

Ազատ պաշտոնների կամ աշխատանքի տեղերի, ինչպես և նոր ընդունելությունները կատարելու դեպքում, վարչությունը պարտավոր



է առաջին հերթին առաջ քաշել ավելի վորակյալ հարվածայիններին, թե բանվորներից և թե ծառայողներից, վորոնք պարտավորվել են տվյալ աշխատանքի համար, առաջնությունը տալով վորակյալներին և տվյալ ձեռնարկությունում ավելի յերկար ժամանակ աշխատողին:

§ 11.

Բանվորների և ծառայողների ընդունելությունները կատարվելու յեն միմիայն Աշխժողկոմի կողքերի վարչության կամ նրա տեղական մարմինների միջոցով: Վերջինս հրաժարվելու դեպքում, վարչությունը կարող է կողմնակի մարդկանց ընդունել և այդպիսի ամեն մի ընդունելը նախորոք պիտի համաձայնեցնել բանկոմի հետ:

Առաջին հերթին ընդունվում են աշխատանքի՝

ա) Արհմիության անդամները և նրանց հետ հավասարեցվածները:

բ) Հարվածայինների վորդիները՝ անչափահասները, կանայք, քույրերը և յեղբայրները, իսկ վոչ հարվածայիններից նրանք, վորոնք վոչ պակաս 3 տարուց աշխատել են տվյալ ձեռնարկություններում: Բացի այդ, վարչությունը պարտավոր է առաջին հերթին ընդու-

նել չեն. աշխատանքի այն բանվորներին, վորոնք ավարտել են կենտրոնական ինստիտուտը (ՑԻՏ) և ուղարկված են աշխատանքի Աշխժողկոմատի օրգանների կողմից, համաձայն վարչության պահանջի:

Անկախ Աշխժողկոմատի կադրերի վարչությունից, լյանկոմ-խմբկոմի համաձայնությամբ, կարելի յե ընդունել հետևյալ պաշտոնյաներին (տես կցված ցուցակը):

§ 12.

Ամեն մի նոր ընդունվող բանվոր-ծառայողի վերաբերյալ բանկոմը կարող է բողոքարկել, այդ մասին վարչությունից հայտարարություն ստանալուց 3 որվա ընթացքում:

Յեթե վարչությունը չի հարգում բանկոմի բողոքը, գործը հանձնվում է ԳԿՀ-ին քննության և վերջինիս վորոշումը պարտադիր է կողմերի համար:

§ 13.

Ճարտ. տեխ. այն աշխատավորների ընդունելությունները, վորոնք իրենց ցանկությամբ փոխադրվում են մի ուրիշ ձեռնարկությունից, թույլատրվում է միայն բանկոմ-խմբկոմի համաձայնությամբ և նախկին աշխատանքի վայրից գրավոր համաձայնություն և թույլատրություն ներկայացնելուց հետո:



§ 14.

Գործի ընդունելու համար փորձնական աշխատանք տալու ժամկետ վորոշվում է՝

Բանվորների համար 6 բանվորական օր:

Գրասենյակային և հաշվային ծառայողների համար մինչև ավագ հաշվետարները ներառյալ 18 բանվորական օր, ավելի բարձր հաշվային գրասենյակային և ճարտ.-տեխ. աշխատավորների նկատմամբ 24 բանվորական օր:

Այն բանվոր-ծառայողները, վորոնք մնում են աշխատանքում փորձնական աշխատանքի համար սահմանված սրոկից ավելի, համարվում են ընդունված:

Անչափահասների բրոնյան սահմանվում է 20 հոգի:

§ 15.

Բրոնիայի թիվը պետք է լրացնել մինչև փետրվարի 15. ըստ վորում առաջին հերթին պետք է ընդունել հարվածայինների վորդիներին և այն բանվորների վորդիներին, վորոնք յերկար ժամանակ աշխատել են տվյալ վարչության մոտ մտցրել են արտադրական արժեքավոր առաջարկներ, ինչպես և նախկին պարտիզաններին աշխատանքի հերոսների վորդիներին և մանկատան սաներին:

Վարչությունը պարտավոր է անչափահասնե-

րին ընդունելուն պետ տրամադրել հանրակացարան և արհեստանոցներ՝ աշխատելու համար։

Բոլոր անչափահասներին պետք է տեղափոխել չինուններում սովորելու․ արգելվում է սև աշխատանքներ հանձնարարել նրանց։ Բրիգադային աշակերտությունը կարելի յե մտցնել միայն այն դեպքում, յերբ չինուններում և փաբզավուչներում տեղ չի լինում։

§ 16.

Բրիգադային կարգով սովորելու դեպքում վարչությունը պարտավոր է բրիգադներ նշանակել տեխնիկապես ամենից պատրաստ բանվորներից։

§ 17

Զարդեսի վարչությունը պարտավոր է կադրեր վորակավորելու համար հատկացնել 1931 թ. արդֆինպլաններով նախատեսված բանվոր-ծառայողի աշխատավարձի 1.3 տոկ. չափով Աշխժողկոմատին և Հայպետշինին։

Բացի դրանից, աշխատակիցներ վերավորակավորելու համար վարչությունը պարտավոր է հատկացնել 7.000 ռուբլի, վորից հաշվային պերսոնալի վերավորակավորման համար—1000 ռուբլի, ճարտարապետա-տեխ- աշ-



խատավորներին ինչպես և տասնապետների ու բրիգադիրների տեխնիկական կուրսեր ուղարկելու համար 3000 ռուբլի, գործուղումների համար (գիտական էքսկուրսիաներ, համագումարներ և այլն) 1620 ռուբլի։

Դիրեկտորների ոգնականների (վոչ մասնագետների) վորակը բարձրացնելու համար ղործուղում համապատասխան դասընթացներ՝ 1200 ռուբ., վարչա-տեխնիկական պերսոնալի վորակը բարձրացնելու համար համապատասխան դասընթացների միջոցով՝ 318 ռուբլի։

§ 18.

Վորակը բարձրացնելու համար սովորող բանվորներին վճարելու յե աշխատավարձ հետևյալ կարգով՝

ա) Տվյալ ձեռնարկության ու աշխատավորներին և անորակ բանվորներին, վորոնք վերավորակավորման նպատակով ազատված են աշխատանքներից, վորոշ ժամերով, վարձը տրվելու յե գործարքի գնացուցակներով, վոչ ցածր քան իր այն տարիֆային դրույքից, վորը վերավորակավորվելուց հետո պետք է ստանա։

Ծանոթություն.— Կենտրոնական Աշխինստիտուտի (ՑԻՏ) կուրսերն ավարտողներին, վորոնք այնպիսի աշխատանք են կատարում, վոր [illegible] հա-

մապատասխան նորման, առաջին յերկու ամսում պետք է ապահովվել տարիֆդրույքով: Հետագայում նույնպես չարդարացնելու դեպքում—ապահովելը չըպետք է անցնի տարիֆ դրույքի 2/3-ից:

§ 19.

Վորակավորման դասընթացներ ավարտած ճարտ. տեխնիկ. աշխատավորները, ծառայողները, ինչպես և այն աշակերտները, վորոնք սովորել են Ֆինուսներում, պարտավոր են աշխատել տվյալ ձեռնարկություններում վոչ պակաս մինչև 5-ամյակի վերջը:

§ 20.

Գործարքով աշխատող վորակյալ այն բանվորները, վորոնք իրենց անմիջական աշխատանքների հետ զուգնթաց բրիգադային կամ անհատական կարգով աշակերտներ են ուսուցանում, վարչությունը պարտավոր է այդպիսիներին լրացուցիչ կերպով վարձատրել վոչ պակաս սովորող աշակերտների ամսական աշխատավարձի 10 տոկոսից:

Յեթե աշակերտների ուսուցումը կատարվում է բրիգադների միջոցով, ապա բրիգադում յեղած բոլոր վորակյալ բանվորներին, սկսած 4 կարգից նույնպես վարչության հաշվին տրվում է լրացուցիչ վարձատրություն, սովո-



րող աշակերտների աշխատավարձի գումարի 10 տոկոսի չափով, վորպիսի գումարը բաժանվում է բրիգադում աշխատող վորակյալ բանվորների միջև, ըստ նրանց տարիֆային կարգերի:

§ 21.

Վարչությունը պարտավոր է արտելների փոխարեն կազմակերպել ցեխային բրիգադներ և նշանակել բրիգադիրներ. բրիգադիրներ նշանակել առաջին հերթին հարվածայիններին, լավագույն արտադրական բանվորներին, արժեքավոր արտ. առաջարկներ անողներին և գյուտարարներին:

Բրիգադիրը պարտավոր է բրիգադի հետ հավասար աշխատել և ստանալ աշխատավարձ իր բրիգադային հասանելիք կարգով: 40 հոգուց ավելի կազմ ունեցող բրիգադի համար թույլ է տրվում ունենալ ազատ բրիգադիր, վարչության հաշվով, վորը ստանալու յե կրտսեր տասնապետի դրույքով, սակայն վոչ պակաս իր բրիգադայում ստացած միջին աշխատավարձից:

§ 22.

Համաձայն Համամիութենական Աշխժողկոմատի, ԺՏԳԽ-ի, Հաղորդակցության Ժողկոմա-

ալի և Կառույցների Կենտկոմի 1930 թ. № 349/29 թ. նոյեմբերի հրջաբերականի, Վարչությունը պարտավորվում է ինքնամրացման յենթարկել շինարարության վրա աշխատողներին:

Վարչությունը պարտավոր է վճարել իր բընակության վայրից վերադարձող բանվորին ճանապարհածախս, յեթե ճանապարհը 1000 կիլոմետրից ավելի յե:

Ծանոթություն.— Յեթե ինքնամրացման պայման կնքած բանվորը հեռանում է պայմանաժամից շուտ իր կամքով հեռանալով, կամ ներքին կարգապահության պայմանները խախտելու հետեվանքով հեռացվելու դեպքում, համաձայն ԳԿՀ-ի վորոշման, վարչությունը պահում է նըման բանվորի աշխատավարձից վճարված ճանապարհածախքը:

§ 23.

Բանվոր-ծառայողների կրճատումը կատարվում է վարչության և բանկոմի նախորոք կայացրած համաձայնությամբ: Աշակերտները կրճատման յենթակա չեն, այլ փոխադրվում են ուրիշ ձեռնարկություններ աշխատելու:

Հաստիքի (շտատի) կրճատման դեպքում աշխատանքում թողնելու նախապատվությունը տրվում է՝



1. Արհմիության անդամներին:

2. 1931 թ. զինակոչի յենթականերին:

3. Հարվածային բանվոր-ծառայողներին, ինչպես և յերկար ժամանակ տվյալ ձեռնարկություններում աշխատողներին, վորոնք նըկատողության կամ տուգանքի տակ ընկած չեն աշխ-դիսցիպլինան խախտելու համար:

4. Արտադրական կոմունաների անդամներին:

5. Քաղաքի բանվորներին, վորոնք գյուղական յեկամուտներով չեն օգտվում:

6. Կենտրոնական ինստիտուտ (ՑԻՏ), Ծինուս և յերիտբանվորության դպրոցներ ավարտողներին:

§ 24.

Այն հեռացողը, վորը համաձայն չի վարչության առաջարկած ցածր աշխատանքը կատարել, մինչև հեռացնելը վարչությունը պարտավոր է հայտնել բանկոմին կամ խըմբկոմին այդ մասին. բանկոմի բողոքի դեպքում գործը հանձնվելու յե ԳԿՀ-ին:

§ 25.

Բանվոր-ծառայողները, վորոնք աշխատում են շինարարության վրա և համաձայն Աշխօրենսգրքի 47. հոդվածի «Ա», «Բ» կետերի, պետք է հեռացվեն, վարչությունը պարտավոր է հեռացնելուց առաջ նախազգուշացնել հե-

տևյալ կարգով՝ 1 ամսից պակաս աշխատողին 1 օր առաջ, մինչև 6 ամիս աշխատողներին 7 օր առաջ, 6 ամիս և ավելի աշխատողներին 15 օր առաջ: Հեռացողներին պետք է հայտնել գրավոր կերպով, նշանակելով հաշվեգրքույկում:

§ 26.

Վարչության կարգադրությամբ կամ աշխատանքների կրճատման հետևանքով աշխատանքից կրճատվող և գործարքով աշխատող բանվորների վերջնական հաշիվները պետք է փակել վոչ ուշ կրճատման հետևյալ օրից, իսկ գործարքով աշխատողների վերջնական հաշիվները պետք է փակել կրճատման օրից սկսած 3 օրվա ընթացքում:

Արձակման օրը համարվում է վերջնական հաշվարկում կատարելու օրը (աշխատավարձի վճարում, բոլոր տեսակի փոխհատուցումներ, արձակման մասին տեղեկանք):

Հաշվարկման ձգձգման (լրիվ կամ մասնակի) հետևանքով, բոլոր սպասված օրերի համար, սկսած աշխատանքի դադարեցման օրից, վճարվում է վարչության կողմից, վոչ պակաս նրանց տարիֆային դրույքից:

§ 27.

Յեթե բրիգադում աշխատողների 5 տոկոսը և ավելին իրենց ցանկությամբ հեռանում



են գործից, դեռ գործը չվերջացած նրանց վըճարվում է տարիֆային կարգով, իսկ վերջնական հաշիվը նրանց հետ պետք է փակել մոտիկ ապագայում, յերբ ամբողջ բրիգադը լուծարքի յենթարկվի: Հեռացողներին, յեթե տըվյալ վայրից ևս հեռանում են, լուծարքից հետո նրանց հասանելիքը վարչությունն իր հաշվին փոխադրելու յե թողած հասցեների համաձայն:

Յեթե վարչության կարգադրությամբ բրիգադի մի մասը հեռացվում է համաձայն Աշխօրենսդրության 47-րդ հոդվածի «Ա» և «Բ» կետերի, վարչությունը պարտավոր է չափել և հաշվել կատարված աշխատանքները և վերջնական հաշիվը փակել նրանց հետ, կամ համաձայն..... հոդվածի հաշվել միջին աշխատավարձի չափով:

§ 28.

Այն բանվոր-ծառայողները, վորոնք իրենց ցանկության համաձայն հեռանում են գործից, պետք է նախազգուշացնեն 12 օր առաջ: Նախազգուշացումը կատարվելու յե վորոշ օրերում, վորպիսի օրերը վորոշում են բանկոմի և վարչության փոխ համաձայնությամբ: Այն բանվորներին, վորոնք չեն նախազգուշացրել հեռանալու մասին 12 օր առաջ, տրվում է

վերջնական հաշիվը, բանվորների աշխատավարձ ստանալու հերթական օրը:

## ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

§ 29.

Վարչությունը իրավունք չունի պահանջելու աշխատավորից այնպիսի աշխատանք, վորը չի վերաբերում նրա արհեստին: Յեթե համապատասխան աշխատանք չլինի, աշխատողին կարելի յե փոխադրել ուրիշ նման գործ կատարելու, տալով նրան վարձատրություն, համաձայն վերջին աշխատանքի գնահատության, սակայն վոչ պակաս իր տարիֆային դրույքից: Յեթե բանվորին փոխադրում են իր արհեստին բոլորովին անհամապատասխան գործի, վոչ իր վորակի համաձայն, այդ դեպքում նա կարող ե հեռանալ գործից ստանալ հեռացման նպաստը:

§ 30.

Գործարքով աշխատող բանվորները իրենց աշխատանքները դեռ չվերջացրած, օրավարձային աշխատանքի փոխադրվելու դեպքում (մանրը աշխատանքներ կատարելու համար) մինչև նախկին գործարքային աշխատանքի վերադառնալը, օրավարձի աշխատանքում յեղած ժամանակամիջոցի համար վարձատրվում են բրիգադում յեղած միջին աշխատավարձով:



§ 31.

Յեթե բանվոր-ծառայողին չնախատեսված վորևե տեղից փոխադրում են մի ուրիշ վայր աշխատելու, նրանց վճարվելու յե փոխադրության ծախքերը: Բացի այդ, պետք ե վճարվում ե տեղափոխվելու օրի աշխատավարձը, միջին աշխատավարձի հաշվով:

Յեթե բանվորն աշխատել ե այնտեղ 5 ամսից ավելի, նրան պետք ե վճարել նաև օրավարձի ճանապարհածախսը մինչև իր բնակավայրը:

§ 32.

Վարչությունը պարտավոր ե այն ձեռնարկներում, ուր աշխատում են 1000 հոգուց ավելի բանվոր-ծառայողներ, պահել հատուկ պատասխանատու աշխատակից, վորը պետք ե զբաղվի միայն բանվոր-ծառայողների վարձելու, արձակելու, բանվորներին մեկ ցեխից մի այլ ցեխ փոխադրելու գործով և այլն, և վորի թեկնածությունը պետք ե նախորոք համաձայնեցնել բանկոմ-խմբկոմի հետ:

## ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ ՅԵՎ ՆՈՐՄԱՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԸ

§ 33.

Բոլոր գործերում կիրառվելու յե ուղղակի գործարքային աշխատանքի ձևը, առանց դե–

արտադրանքի սահմանափակման, օրավարձային աշխատանք թույլատրվում է միայն նորմիրովկայի չենթարկվող աշխատանքներում։

Ակկորդային աշխատանքները թույլատրվում է բացառիկ դեպքերում, այն էլ միության գիտությամբ և համաձայնությամբ։

§ 34.

Վարչությունը պարտավոր է սույն պայմանագիրը ստորագրելուց մեկ ամսվա ընթացքում մշակել և համաձայնեցնել միության հետ պարգևատրումների ձևը և կարգը, ինչպես գործարքով, այնպես էլ այն աշխատանքների համար, վորոնք չեն յենթարկվում նորմիրովկայի։ Պարգևատրումները կատարվում են հետևյալ դեպքերում, յերբ նկատվում են արտադրության վորակի բարձրացում, բրակի իջեցում, նյութերի և հում նյութի խնայողաբար գործադրում, պրոստոյների տոկոսների իջեցում, տրված աշխատանքների լավագույն կատարման ցուցանիշներ և այլն։

§ 35.

Առանձին աշխատանքների վարձատրությունը կատարվում է միության հետ համաձայնեցված, միացյալ գնացուցակների համաձայն, վորպիսի գնացուցակը պարտադիր է աշխատանքների նորմալ պայմաններում և համապատասխան վորակի շինանյութեր ունենալու դեպքում։ Գնացուցակների վոչ հարգելի պատճառներով չեղումներ կատարելը արգելվում է։



§ 36.

Միասնական նորմաներով նախատեսված արտադրության պայմանների բացակայության դեպքում, յերբ հնարավոր չէ գնահատել աշխատանքը, կամ փոխել աշխատանքի այն պայմանները, վորոնք ազդում են աշխատանքի վրա ցածրացնելով այն, գնահատությունը կատարվելու յե ԳԿՀ-ի կողմից։ ԳԿՀ-ն քննություն է անում և գնահատում է նաև այն աշխատանքները, յերբ ձեռնարկության մեջ իբրև նորություն են կիրառվում և ստեղծվում են աշխատանքի հատուկ պայմաններ, օրինակ՝ ռացիոնալացում այս կամ այն գործի, կազմակերպչական տեխնիկական բարելավում և այլն, վորոնք բանվորի աշխատավարձը բարձրացնելու յեն։

Բոլոր նման դեպքերում վարչությունը պարտավոր է ստուգել գնացուցակում կատարված բոլոր փոփոխությունները, իսկ ԳԿՀ-ն իր հերթին պետք է արձանագրի այն պատճառները, վորոնց հետևանքով կատարվել է գնացուցակների իջեցում կամ ավելացում։

ԳԿՀ-ի հաստատած փոփոխությունները վերաբերելու յեն միմիայն տվյալ աշխատանքին և ոչ թե ամբողջ շինարարությանը:

ԳԿՀ-ի կատարած գնացուցակի փոփոխությունները կարող են տարածվել նաև այն բոլոր շինարարությունների վրա, յեթե ԳԿՀ-ն կազմված լինի միջգերատեսչական կարգով (ամեն մեծ շինարարության ներկայացուցչի մասնակցությամբ) և միության ներկայացուցչի մասնակցությամբ:

Աշխատանքներում առաջացած բոլոր աննորմալությունների մասին բանվորները պարտավոր են հայտնել վարչությանը: Վերջինս այդ մասին կազմելու յե արձանագրություն:

§ 37.

Վարչությունը և միությունը հավասար չափով պատասխանատու յեն այն գնացուցակների ճիշտ կիրառման և շեղումների համար, վորոնք կազմված են շինարարության և շինանյութեր տրամադրող ձեռնարկությունների համար:

Միութենական կազմակերպությունները սույն պայմանագրի համաձայն պարտավոր են իրենց վրա վերցնել պայմանագրի ճիշտ կիրառման պարբերաբար հսկողությանը, գնացուցակների կիրառմանը շինարարություններում, տանել բացատրական աշխատանքներ



բանվորական մասսաների մեջ՝ գնացուցակների նշանակության մասին և տեխնիկական նորմիրովկայի կատարած դերի ու դիսցիպլինայի մասին:

Կենտրոնացնել բանվորների ուշադրությունը և օժանդակությունը՝ տեխնիկական նորմիրովկայի գործն ավելի ուժեղացնելու, ձեռնհաս և համապատասխան բանվորների առաջ քաշումը, հատկապես հարվածայինների, լրացնելու տեխ. նորմիրովկայի աշխատողների թիվը, իր ժամանակին տեղեկացնել վերադաս մարմիններին և Աշխժողկոմատին, վարչության պատճառով տեղի ունեցած գնացուցակների խախտումների մասին և միջոցներ ձեռք առնել գնացուցակների դիսցիպլինան ամուր հիմքերի վրա դնելու:

Աշխատ. արտադրողականության լրիվ հաշվետվությունը պահանջել շին. օրգաններից, ապահովել հսկողությունը և իր օժանդակությունն այդ խնդրում: Ձեռք առնել միջոցներ անմիջապես կանխելու շինարարության մեջ առաջացած ընդմիջումները, վորոնք կասեցնում են արտադրության ընթացքը, աշխատանքի բոլոր բնագավառներում: Միաժամանակ անհրաժեշտ է պարբերաբար ուսումնասիրել աշխատավարձի սահմանված նորմաները և ուսումնասիրության արդյունքները օգտագոր-

ծել, հետագայում աշխատավարձի խնդիրները կարգավորելու համար:

§ 38.

Աշխատանքների միացյալ գնացուցակներում չնախատեսված աշխատանքի գները մշակվում են վարչության կողմից, ելնելով տվյալ աշխատանքների կարգից, բանվորների միջին աշխատավարձից և արտադրանքի նորմաներից:

Համամիութենական միասնական նորմաներում չնախատեսված արտադրական նորմաները (նորմի վիրաբոտկի) և նրանց կարգը սահմանվում են ըստ աշխատանքների բնույթի և վոչ թե աշխատանքը կատարող անձի նորմաների չափը սահմանվում է լավագույն բանվորների արտադրանքի հիման վրա, կատարված խրոնոմետրաժի տվյալներով:

§ 39.

Յեթե աշխատանքի գոյություն ունեցող պայմաններն այնպես են դասավորված, վոր ամենալավ բանվորը ինտենսիվ աշխատելու դեպքում չի կարողանում արդարացնել աշխատավարձի սահմանված նորման, այդ դեպքում նորմաները չեն փոփոխվում, այլ ԳԿՀ-ի վորոշմամբ բարձրացվում են գները: Բարձրացված գնացուցակները պահպանում են իրենց գոյությունը այնքան ժամանակ, վորքան ժամանակ շարունակվեն հիշված առանձնահատուկ պայմանները: Գնացուցակների ամեն մի նման բարձրացում պետք է կատարել տեղում, նախորոք հարցը քննելուց հետո: Յեթե աշխատանքի պայմանները նորմալ են, և բանվորը չի կարողանում արդարացնել իր նորման, այդ դեպքում գնացուցակների բարձրացում չի կատարվում: Յեթե աշխատանքի տեխնիկական կազմակերպչական պայմանները բարեփոխվում են և աշխատանքի արտադրողականությունը սկսում է բարձրանալ անկախ բանվորի աշխատանքի պայմաններից, աշխատավարձի պայմանները և նորմաները վերամշակվում են ԳԿՀ-ի միջոցով, 6-որվա ընթացքում, իսկ առանձին բարդությունների դեպքում՝ 12 որվա ընթացքում:

§ 40.

Յեթե բանվորի ձեռնարկությամբ վորևէ աշխատանքի մեջ բարեփոխություն է մտնում, վորով բարձրանում է արտադրողականությունը, աշխատանքի նորման այդ բանվորի վերաբերմամբ չենթարկվում է փոփոխության և տրվում է բանվորին, բացի փոխհատուցումից, նաև վերջին 3-ամիսների համար նոր գնացուցակի տարբերությունը, անկախ նրանից, թե տվյալ բանվորը անհատապես թե բրիգադի մեջ է աշխատում:

## § 41.

Այն դեպքում, յերբ աշխատանքները կատարվում են կոլեկտիվ կերպով (հարվածային բրիգադներ, արտադրական կոլեկտիվներ և այլն) վարձատրության ընդհանուր նորմաները վորոշվելու յեն ամեն դեպքում աշխատանքի բնույթի և կատարման մասերի համաձայն, հայտարարելով այդ մասին բանվորներին, վարչության կարգադրությամբ և գիտությամբ:

## § 42.

Հարմարություններ ստեղծելու, աշխատավայրը կահավորելու և գործիքներ պատրաստելու համար կորցրած ժամանակի և աշխատանքի վարձատրությունը հաշվվելու յե առանձին, անկախ գործարքից, իբրև ինքնուրույն աշխատանք, համաձայն միջին աշխատավարձի:

## § 43.

Նորմաների և գնացուցակների առթիվ վարչության և բանվորների մեջ հարուցված կոնֆլիկտները լուծվելու յեն ԳԿՀ-ի կողմից: Մինչև կոնֆլիկտների լուծելը բանվորներն իրավունք չունեն հրաժարվել աշխատանքից, յեթե նույնիսկ նրանք համաձայն չլինեն տվյալ գնացուցակով աշխատելու:



Ծանոթություն.— Այն աշխատանքների վարձատրությունը, վորոնք բանվորը կատարել է, վարձատրության մասին կոնֆլիկտ հարուցելու ժամանակամիջոցում, ԳԿՀ-ին դիմում տալու օրից վճարվելու յեն նրան, համաձայն ԳԿՀ-ի վորոշման, սակայն վոչ պակաս, նրան գործը հանձնելու օր պայմանավորվածից: ԳԿՀ-ի վորոշումից հետո նույնիսկ աշխատանքը վարձատրվելու յե համաձայն ԳԿՀ-ի վորոշման, թեկուզ այդ վորոշմամբ ավելի ցածր վարձ հասնի բանվորին, քան թե վարչությունն է սահմանել աշխատանքը հանձնելուց:

## § 44.

Գործարքային այն բանվորները, վորոնք զբաղված են նոր մեքենաներ, ստանոկներ և նյութեր փորձելու աշխատանքով, օրավարձի աշխատանքի փոխադրվելու դեպքում պահպանում են իրենց միջին աշխատավարձը:

## § 45.

Գործարքով աշխատանք բանվորներին հանձնելու դեպքում վարչությունը պարտավոր է նախօրոք բացատրել բնույթը, չափը, գնահատությունը և աշխատանքի ժամանակի տևողությունը, վորպիսիք պահանջում է գործը:

§ 46.

Կառուցողների Արհմիության կենտկոմի մըշակած տարիֆային տեղեկագրի համաձայն պետք է վորոշել բանվորի կատեգորիան թե անհատորեն և թե բրիգադի մեջ աշխատելու դեպքում, վոչ ուշ քան նրա ընդունվելու 7-րդ որը, համաձայն կատարվող աշխատանքի վորակի և վոչ թե աշխատանք կատարող անձի վորակի:

Չի թույլատրվում բանվորի կատեգորիան վորոշել բրիգադի հայեցողությամբ. յեթե վարչությունը 7 որվա ընթացքում չի վորոշել նրա կատեգորիան, այդ դեպքում մինչև բանվորի կատեգորիայի վորոշումը, բանվորը ըստանալու է վարձատրություն այն չափով, ինչ չափով նախկին աշխատավայրում ստացել է:

§ 47.

Աշխատանքի հանձնումը և չափելը անպայմանորեն կատարվելու յե բրիգադի ներկայացուցչի մասնակցությամբ: Չափելու և հանձնելու համար գործադրված ժամանակամիջոցի մասին պետք է հիշատակել ստուգողական հանձնողական արձանագրության մեջ և այդ ժամանակի համար վարչությունը վճարելու յե մասնակիցներին միջին աշխատավարձի չափով:

Հանձնման արձանագրությունը ստորագըր-



վում է յերկու կողմից ևս: Կատարված աշխատանքի արձանագրված հաշվի պատճենը տրվելու յե բրիգադի ներկայացուցչին առաջին իսկ պահանջի դեպքում:

Աշխատավորի որական տարիֆ. դրույքի առաջին կարգի համար սահմանվում է՝

ա) Բանվորների համար 1 ռ. 62 կ., իսկ առաջին կարգի աշակերտների համար 1 ռ. 05 կ. Աշխատավարձի բաշխումը կատարվում է հետևյալ տարիֆային ցանցով՝

| Բանվորների համար կարգը | Փոխհարաբերություն |
|---|---|
| 1 . . . . . | 1,0 |
| 2 . . . . . | 1,35 |
| 3 . . . . . | 1,45 |
| 4 . . . . . | 1,60 |
| 5 . . . . . | 1,80 |
| 6 . . . . . | 2,10 |
| 7 . . . . . | 2,50 |

| Աշակերտների համար կարգը | Փոխհարաբերություն |
|---|---|
| 1 . . . . . | 1,0 |
| 2 . . . . . | 1,30 |
| 3 . . . . . | 1,60 |
| 4 . . . . . | 1,90 |
| 5 . . . . . | |

Ծանոթություն.— Բոլոր շենքերի վրա և վարչության մեջ աշխատող (ծառայողների համար) սահմանվում է ամսական աշխատավարձ պաշտոնական դրույքների ձևով, ըստ սույնին կցված ցուցակի:

Այն բրիգադները, վորոնք կազմված են կենտ. աշխատանքի ինստիտուտ. դասընթացների (ՑԻՏ) ավարտողներից, ավարտելուց հետո 3 ամիս ժամանակով պետք է աշխատեն վարչության կողմից նշանակված առանձին հրահանգչի ղեկավարությամբ, և վարձատրվում են վորպես կրտսեր տեխ. պերսոնալ: 3 ամիսը լրանալուց հետո վարչությունը նշանակում է բրիգադի միջից մեկին իբրեվ ղեկավար բրիգադիր, իսկ հրահանգիչ նշանակում է նոր ավարտող ցիտովցիների նոր խմբակների ղեկավար:

§ 48.

Աշխատավարձը վճարվում է ամսական 2 անգամ, այն է՝ առաջին կիսամսյակի համար մինչև տվյալ ամսի 10-ը ավանս, տարիֆային դրույքներով, իսկ 2-րդ կիսամսյակի համար՝ տվյալ ամսի 25-ին, չափելով ամբողջ աշխատանքները և վճարելով ամբողջ ամսվա գերարտադրանքի հետ միասին:



Բրիգադներին, կոլեկտիվներին և արտադրական կոմունաներին աշխատավարձ տրվում է կոլեկտիվ ձևով: Այդ ձևով վճարելը պետք է լինի աշխատողների ցանկությամբ և կամավոր կերպով, ամեն մեկի առանձին համաձայնությամբ: Վարչությունը պարտավոր է ամեն դեպքում անհատական հաշվառում կատարել աշխատանքի և աշխատավարձի:

§ 49.

Վարչությունը պարտավոր է տրամադրել բանվորներին համապատասխան գործիքներ և շինանյութ: Յեվ սեփական գործիքներ չունենալու պատճառով գործը չընդունելն արգելվում է: Յեթե բանվորն աշխատում է իր սեփական գործիքներով, վարչությունը պարտավոր է, բացի աշխատավարձը, վճարել նաև առանձնապես գործիքների մաշվելու համար դրամական փոխհատուցում: Փոխհատուցումը վճարվելու յե ամեն 3 ամիսը մեկ անգամ, համաձայն կազմած ցուցակների:

## ԲՐԱԿՆԵՐԻ ՅԵՎ ՊՐՈՍՏՈՅՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄԸ

§ 50.

Սահմանված աշխատավարձով բանվորը պարտավոր է կատարել լավ վորակի աշխատանք: Վատ վորակի աշխատանքը, վորն առաջացել է

բանվորների մեղքով, նա պարտավոր է նորից վերաշինել, առանց առանձին վարձի. կամ վարձատրել ցածր գնով, համապատասխան աշխատանքների թերությունների վարչությունից ստացված վատ գործիքները, կամ շինանյութեր հայտաբերելու դեպքում, վորի պատճառով կարող է գործը փչանալ կամ տուժել, բանվորը անմիջապես պետք է հայտնի վարչության:

Վարչա-տեխնիկական անձինք, իրենց սխալ կարգադրությամբ, յերբ պատճառ են դառնում անորակ և վատ աշխատանք առաջանալուն, առանձնապես նյութական պատասխանատվության են յենթարկվում պատճառած վնասի համար, բացառությամբ այն դեպքերից, յերբ, տեխնիկական անվտանգության պահպանման համար կարգադրություն արված չի, կամ այն կապված է վորոշ վտանգի հետ: Նման դեպքում աշխատանքի այն մասը, վորն անորակ կճանաչվի, կվարձատրվի սահմանված հատուկ գնացուցակով:

Առանց վարչության կարգադրության անորակ աշխատանք կատարելու և շինանյութը փչացնելու դեպքում, վնասները պահանջվելու յեն համաձայն տուժերի ցուցակների:

Յեթե բանվորի հանցանքով փչացած աշխատանքը նորից օգտագործվելու չի ձեռնարկության կողմից, իբրև արժեքավոր աշխատանք, այնպիսին վճարվելու է իջեցված գնահատությամբ, հակառակ դեպքում՝ համաձայն ԳԿՀ-ի վորոշման:

Նյութը փչացնելուց վնասը պահանջվում է և գանձվում է փչացնողներից, սակայն այն վոչ ավելի նրա տարիֆային դրույքի 1/3-ից:

§ 51.

Բանվորի կամ բանվորների խմբի անփույթ վերաբերմունքի, տեխնիկական ներքին կանոնների խախտման, վարչության կարգադրությունները չկատարելու հետեվանքով առաջացած վնասների և դիտավորյալ ձեվով աշխատանքը չկատարելու համար, աշխատանքի վարձը չի վճարվում և հանցավորներին գործից հեռացնում են առանց լուծարքային նպաստի:

§ 52.

Աշխատավորը պարտավոր է անմիջապես հայտնել վարչությանը և տեղկոմին պրոստոյի դեպքում: Բացի այդ, իրենից կախված բոլոր հնարավոր միջոցները պետք է գործադրի և նախազգուշացնի վարչությանը՝ առաջ գալիք պրոստոյը կանխելու: Հակառակ դեպքում պրոստոյի համար չի վճարվում և բանվորը պետք է յենթարկվի պատասխանատվության, համաձայն տուժերի ցուցակի:

§ 53.

Վարչությունը պարտավոր է միջոցներ ձեռք առնել պրոստոյները կանխելու, հակառակ դեպքում, յերբ անխուսափելի յե, պարտավոր է բանվորներին փոխադրել ուրիշ աշխատանքի:

Վարչության պատճառով առաջացած պրոստոյների (յերբ անխուսափելի յե կամ ժամանակին կարգադրություն չի արված) համար հանցավորները յենթարկվում են պատասխանատվության, բացի այդ վճարում են իրենց անփութությունից առաջացած բոլոր վնասները:

§ 54.

Պրոստոյի դեպքում վճարվում է՝ ա) 3 որից վոչ ավելի պրոստոյի համար՝ միջին աշխատավարձի չափով:

բ) 3 որից ավելի պրոստոյի դեպքում՝ տարիֆային դրույքով, հաշվելով այն պրոստոյը սկսվելու րոպեյից:

§ 55.

Վատ յեղանակներին (անձրև և այլ մթնոլորտային տեղումներ և յերևույթներ), յերբ բացոթյա աշխատանքն անհնարին է լինում, վարչությունն իրավունք է վերապահվում փոխադրել բանվորներին ծածկի տակ և տալ նրանց, համաձայն իրենց վորակի աշխատանք և վճարել տվյալ աշխատանքի գնացուցակով, սակայն վոչ պակաս տարիֆային դրույքից:



Փոխադրել ծածկի տակ և հանձնել այնպիսի աշխատանք, վորը չի համապատասխանում իրենց վորակին և վճարել միջին աշխատավարձի հաշվով: Ծածքի տակ աշխատանքը տալը հնարավոր չլինելու դեպքում, վարչությունը վճարելու յե բանվորներին չաշխատած որերի վարձը, համաձայն տարիֆային դրույքի:

Ծանոթություն.— Աշխատանքը շարունակելն անհնար լինելը վորոշում է վարչությունը, համապատասխան արձանագրությամբ:

# ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ՄԱՍԻՆ

§ 56.

Պարգևատրվում են այն բոլոր բանվորները, վորոնք քանակական և վորակական ցուցանիշներով լրիվ կատարում են իրենց հանձնարարված աշխատանքի նորման:

Պարգևատրման չափը կախված է կատարած աշխատանքի քանակից, վորակից և տնտեսումից:

Պարգևատրման ֆակտորներն են հետևյալ ցուցանիշները՝

ա) Առանձին միավորումներում շինանյութե-րի ծախսման մեջ տնտեսում մտցնելը:

բ) Պրոստոյների տոկոսի իջեցումը:

գ) Բրակի իջեցումը:

դ) Արտադրանքի վորակի լավացումը:

Վարչությունը պարտավոր է մինչև փետըր-վարի 15 մշակել և բանկոմի հետ համաձայ-նեցնել պարգևատրման կանոնները, թված ցու-ցանիշների համաձայն և կիրառել կյանքում:

Ծանոթություն.— Վարչությունը պար-տավոր է պարգևատրել լավ աշակերտ-ներին գործնական և թեորետիկ առարկա-ների ու աշխատանքների առաջադիմու-թյան համար, արտադրության մեջ աշխա-տելիս վորակի և քանակի ցուցանիշների լրիվ նորման կատարելու դեպքում, լավ կարգապահության համար, գյուտարարու-թյան և արժեքավոր առաջարկների հա-մար:

## ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒ-ԹՅՈՒՆ ՅԵՎ ԳՅՈՒՏԱՐԱՐՈՒ-ԹՅՈՒՆ

§ 57.

Վարչությունը պարտավոր է քննություն անել արտադրական խորհրդակցության և անհատ բանվորների առաջարկները 3 որվա



ընթացքում և հայտնել առաջարկի հեղինակ-ներին վորոշման հետևանքը:

§ 58.

Վարչությունը պարտավոր է 10 որվա ըն-թացքում մշակել և համաձայնեցնել բանկոմի հետ հարվածայինների և սոցմրցման մասնակ-ցողների աշխատանքի հաշվառման ձևը, վոր-պեսզի հնարավոր լինի այդպիսի հաշվառումը կատարել 1931 թ. փետրվարի 1-ից վոչ ուշ:

§ 59.

Գյուտարարների վորակը բարձրացնելու հա-մար, վարչությունը պարտավոր է հիմնել և կահավորել մինչև Մայիսի 15-ը գյուտարար-ների անկյուն: Բացի այդ, վարչությունը պար-տավոր է տեխնիկական և կազմակերպչական ոժանդակություն ցույց տալ գյուտարարներին:

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄԵՐԸ ՅԵՎ ՀԱՆԳԻՍՏԸ

§ 60.

Արտաժամյա աշխատանքներ և հանգստի ո-րերին աշխատել չի թուլատրվում:

Արտադրության անհրաժեշտ դեպքում թույլ է տրվում արտաժամյա աշխատանք, սակայն նախորոք համաձայնություն կայացնելով վար-չության և միության միջև ու ստանալով

Աշխժողկոմատի թույլտվությունն այս մասին։

Արտաժամյա աշխատանքը վարձատրվում է հետևյալ ձևով՝

ա) Աշխատողը ստանալու յէ արտաժամյա աշխատանքի առաջին յերկու ժամերի համար ամեն մի ժամին իրենց տարիֆային դրույքի ամբողջ մեկ քառորդի չափով։

բ) Գործարքով աշխատողները արտաժամյա աշխատելու դեպքում ստանալու յեն՝ առաջին յերկու ժամերի համար՝ ամեն մի ժամի համար 25 տոկ., իր տարիֆային դրույքով, իսկ հետևյալ ժամերի համար ամեն մի ժամին իր տարիֆային դրույքի 50 տոկոսի չափով։

Ծանոթություն.— Աշակերտներին վոչ մի դեպքում չի թույլատրվում արտաժամյա աշխատանքներ տալ և հանգստի որերին աշխատացնել։

§ 61.

Չչափավորված բանվորական որ է սահմանվում ըստ սույն պայմանագրին կցված պաշտոնների ցուցակների։

§ 62.

Յերկու շաբաթվա արձակուրդի (12 բանվորական որ) հարցը նոր ընդունված բանվորի կողմից կարող է հարուցվել վարչության առաջ միայն 11 ամիս անընդհատ աշխատելուց հետո։

Բանվորական տարին հաշվվելու յէ տվյալ



վարչության մոտ 12 ամիս (ընդունված որից) աշխատելով։

Յերկրորդ անգամ արձակուրդ տալու հարցը կարելի յէ հարուցել նախկին բանվորական տարում աշխատելուց հետո. ևս 5 և կես ամիս լրիվ տվյալ վարչության մոտ աշխատանքը շարունակելուց հետո։

Արձակուրդը, վորպես օրենք, տրվում է որացուցային տարվա սկզբին կամ վերջին, իսկ աշակերտներին տրվում է անպայման ամառվա ամիսներում։ Առանձին դեպքերում կարելի յէ տալ նաև տարվա ընթացքում, յեթե աշխատանքի բնույթը թույլ է տալիս արձակուրդ դընալու։

Ծանոթություն.— Յեթե վարչությունը փոփոխում է աշխատավորին ուրիշ աշխատավայր, կամ Աշխժողկոմատի կարգադրությամբ նա փոխադրվում է այլ վարչության մոտ աշխատելու, աշխատանքի ստաժը, վորն արձակուրդի իրավունք է տալիս, չի ընդհատվում։

Վարչության կողմից աշխատանքից արձակվածները, կամ իրենց կամքով հեռացվողները 11 ամսից պակաս աշխատած լինելու դեպքում ստանալու յեն արձակուրդի փոխհատուցում՝ իրենց ստացած արձակուրդի 1/25-ի չափով, տվյալ վարչության մոտ իրենց աշխա-

ված ամբողջ ժամանակի համար, սակայն այն հաշվով, որ տրված գումարը չգերազանցի նրանց միջին աշխատավարձի հաշվով 12 օրվա վարձը:

Այն աշխատավորները, որոնք յերկրորդ աշխատանքի տարում նույն վարչության մոտ 5 ամիս աշխատել են հեռացվում են («Ա», «Բ», «Գ» կետերը 47-րդ հոդվածի աշխօրենսգրքի), ինչպես և նրանք, որոնք կկանչվեն զինվորական ծառայության կամ կգործուղվեն սովորելու, ստանալու յեն արձակուրդի փոխարեն դրամական փոխհատուցում՝ 12 օրվա միջին աշխատավարձի չափով:

Այն աշխատավորները, որոնք աշխատել են 5 և կես—11 ամիս հեռացված են, բացի վերև հիշված պատճառներից, այլ պատճառներով (ինչպես և իրենց կամքով հեռացողները) նաև նրանք, որոնք 5 ամսից պակաս են աշխատել, անկախ հեռացման պատճառներից, ստանալու յեն իբրև արձակուրդի փոխհատուցում, ամեն մի աշխատած ամսի համար մի օրվա վարձատրություն:

§ 63.

Անչափահասները նույն վարչության մոտ 5 և կես ամիս աշխատելուց հետո ձեռք են բերում մեկ ամսվա արձակուրդի իրավունք ամբողջ տարվա համար. չօգտագործված արձա-



կուրդի դիմաց անչափահասներին դրամական փոխհատուցում և տրվում նրանց վճարված ամբողջ աշխատավարձի 2/25-ի չափով:

Չափահաս դառնալու մոմենտին, յեթե նրանք հերթական արձակուրդ չեն ստացել, այդ դեպքում արձակուրդ տրվելու յե բացի սահմանված յերկու շաբաթվանը, նաև լրացուցիչ՝ ամեն մի ծառայած ամսի համար մեկական օր, հաշվելով այն մինչ չափահաս դառնալու օրը:

Ծանոթություն.— Չչափավորված բանվորական օր ունեցող աշխատավորներին տրվելու յե լրացուցիչ արձակուրդ, համաձայն սույն որոշմանագրին կցված ցուցակի:

Ծանոթություն.—2. Այն բանվորներն ու տեխնիկական պերսոնալը, որոնք լավագույն աշխատողներ են արտադրության մեջ (հարվածայիններ և սոցմրցման մասնակցողներ), որոնք յերկար ժամանակ աշխատել յեն տվյալ հիմնարկ-ձեռնարկությունում և լավ որակի աշխատանք են կատարել, արտադրական խորհրդակցություններում արժեքավոր առաջարկներ են մտցրել, կամ գյուտարարության մեջ աչքի յեն ընկել, խրախուսվելու յեն վարչության կողմից, առաջին հերթին ուղարկ-

վելու յեն տեխնիկ․ ԲՈՒՀ-երը սովորելու, հանգստյան տներ-կուրորտները, գործուղվելու յեն արտասահման փորձակավորվելու և առաջին հերթին նրանք պետք է ոգտվեն դեֆիցիտային ապրանքներից և այլն:

Ծանոթություն․—3․ Անչափահասներին, վորոնք աշխատում են վնասարար և ծանր գործերում (վորոնք նախատեսված են որենքով) տրվելու յե լրացուցիչ արձակուրդ յերկու շաբաթով:

Մինչև արձակուրդի իրավունք ձեռք բերելը յեթե անչափահասները աշխատանքից հեռանում են նրանց լրացուցիչ կերպով վճարվում է յուրաքանչյուր աշխատած ամսվա համար մեկական օրվա աշխատավարձը միջին աշխատանքի չափով․ մեկ ամսից պակաս աշխատողներին վոչինչ չի վճարվում:

§ 64․

Տեխնիկական պերսոնալի արձակուրդ տալու կարգը սահմանվում է վարչության կողմից նախապես համաձայնության գալով բանկոմի և Ճ․Տ․Մ․-ի հետ հետևյալ ձևով՝

ա) Չափավորված բանվորական որ ունեցող ճարտարագետա-տեխնիկ աշխատավորների համար, սահմանվում է տարեկան 3 շաբաթից մին-



չև մեկ ամսյա արձակուրդ, յելնելով նրանց աշխատանքի ծանրաբեռնվածությունից ըստ սույնին կցված պաշտոնների ցուցակի:

Ծանոթություն․— Վարչությունը պարտավոր է լվացարանների մոտ ունենալ օճառ և մշտապես բաժանել բանվորներին:

§ 65․

Վարչությունը պարտավոր է մինչև փետրվարի 1-ը շինարարության կից կամ բարակում հիմնել բժշկական առանձին ոգնության կայան (առանձին շենքում) և կահավորել այդպիսին համապատասխան ինվենտարով: Բացի այդ, ունենալ փոխադրական միջոցներ՝ դժբախտ դեպքերի ժամանակ վիրավորներին կամ հիվանդներին կայանից կամ հանրակացարաններից ամբուլատորիա կամ հիվանդանոց փոխադրելու համար:

Վարչությունը պարտավոր է մինչև փետրվարի 15-ը կազմակերպել բոլոր ցեխերում դեղատուփեր անհրաժեշտ դեղորայքով, հիվանդին շտապ բժշկական ոգնություն հասցնելու համար:

§ 66․

Վարչությունը աշխատանքները սկսելուն պես պարտավոր է ապահովել յեկվոր և իրենց պահանջով այլ տեղերից յեկած բանվորներին կահավորված բնակարանով, (հանրակացարան

և այլն), վորպեսզի կահավորվելու լինեն սեղաններով, պահարաններով, մատրացներով, բոքձերով, լվացարաններով: Ստեղծվելու յեն հնարավորություն պարբերաբար մաքրելու, հատակը լվանալու և ախտահանելու, (միջատների բազմանալը կանխելու համար) սանիտարական և առողջապահական հարմարություններով:

Բնակելի շենքերի մի մասը պետք է հատկացնել ընտանիքավոր, վորակյալ և դեֆիցիտային արհեստների բանվորներին և նրանց վորոնք յերկար ժամանակ կապված են տվյալ շինարարության հետ:

Բոլոր դեպքերում բնակարանները բաշխելիս, բացի զուտ ամառային ժամանակավոր բնակարաններից, վրաններից և բարաքներից, կարող է սահմանվել բնակարանային վարձ և կոմունալ ծախսեր՝ զբաղեցրած բնակարանների համար, համապատասխան աշխատավարձի չափով (դիֆերենցիալ հարաբերությամբ), համաձայն ՀԱՄԿԽ-ի և Համամիութենական ԺՏԽ-ի 1929 թ. օգոստոսի 5-7-ի կարգադրության:

Աշակերտներին բնակարան տրամադրվում է ձրիաբար:

Ծանոթություն.—1. Վարչության տրամադրության տակ յեղած բնակարան-



ների բաշխումը կատարվելու յե վարչության և բանկոմի փոխադարձ համաձայնությամբ. ըստ վորում բնակարաններ առաջին հերթին տրվելու յեն հարվածային բանվորներին, յերկար ժամանակ տվյալ շինարարությունում աշխատողներին և նրանց, վորոնք ինքնաամրացման կարգով աշխատելու յեն մինչև 5-ամյակի վերջը:

Ծանոթություն.—2. Յեթե ամառային տիպի շենքեր են տրամադրվում բանվորներին (բարաքներ, վրաններ և չտաքացնող շենքեր) կոմունալ ծախսեր և բնակարանի վարձ չի գանձվում նրանցից:

§ 67.

Իրենց կամքով հեռացողները, կամ ներքին կանոնների խախտման պատճառով հեռացվածները պարտավոր են 5 օրվա ընթացքում ազատել բնակարանը:

Հակառակ դեպքում հեռացվում են վարչական կարգով:

Ծանոթություն.—1. Այն աշխատավորներին, վորոնց խնամքի տակ ապրում են անչափահասներ, կամ ծերացածներ կարելի յե 5 օրվա փոխարեն թույլ տալ 15 օրից հետո ազատելու բնակարանը:

Ծանոթություն.—2. Սույն միջոցի կիրառումը չի վերաբերում նրանց, վո-

րանց ընտանիքի կերակրողը դժբախտ պատահարներից մեռել է, նման դեպքում թույլ է տրվում զբաղեցնել բնակարանը մինչև 3 ամիս:

§ 68.

Շինարարության և արդյունաբերության մեջ աշխատող բանվոր-ծառայողներին արտահագուստ տրվելու յե 1930 թ. Խ.Ս.Հ.Մ.-ի Աշխժողկոմատի հրատարակված նորմաներով և սույնին կցված լրացուցիչ ցուցակով:

Արտահագուստը ձեռնարկության սեփականությունն է, նույնիսկ մաշվելու դեպքում պետք է վերադարձնել արտահագուստը ձեռնարկությանը:

Մինչև հին արտահագուստը չվերադարձնելը նորը չի տրվելու: Արտահագուստ յուրացնողները յենթարկվում են պատասխանատվության, և արժեքը գանձվելու յե յուրացնողից շուկայի գներով, այդ մասին առաջ յեկած վեճերը քննվելու յեն Գ. Կ. Հ.-ի միջոցով:

Մեծ շինարարություններում վարչությունը պարտավոր է ունենալ առանձին շենքեր՝ արտահագուստների և գործիքների պահելու համար:

Վարչությունը պարտավոր է լվանալու տալ և կարկատել իր հաշվով արտահագուստները և վոտնամանները: Պարտավոր է նաև կազ-



մակերպել վոտնամաններ նորոգելու արհեստանոցներ:

Ծանոթություն — Աշակերտները ստանալու յեն արտահագուստ չափահաս բանվորների հետ հավասար, այն արհեստների նորմայով, վորի համար նրանք պատրաստվում են:

§ 69.

Շինարարություններում, կամ ձեռնարկություններում առաջացած դժբաղդ պատահարներից մեռած բանվորների ընտանիքին վարչությունը պարտավոր է տալ նպաստ մեռածի միջին աշխատավարձի հաշվով՝ մեկ ամսվա համար, անկախ ապահովագրական գանձարկղի տված նպաստից:

§ 70.

Քաղաքից դուրս գտնվող այն կառուցումներում և շինարարություններում, ուր բացակայում են հասարակական բաղնիքներ, վարչությունը պարտավոր է հիշյալ շինարարության վրա գրավված աշխատավորներին ապահովել բաղնիքով, ընդ վորում բաղնիքի օգտագործման պայմանները պետք է այնպես դասավորել, վորպեսզի աշխատավորի խնամքի տակ գտնվող ընտանիքի անդամները ևս հնարավորություն ունենան օգտվելու բաղնիքից:

Ծանոթություն.—1. Բոլոր աշակերտները և անչափահասներն ոգտվելու յեն կոմունալ ծառայություններից (բաղնիք, լվացքատուն և այլն) ձրիաբար:

Ծանոթություն.—2. Բանվորի հիվանդության դեպքում հանրակացարանում նրա տեղը պահվում է մինչև հիվանդանոցից վերադառնալ:

§ 71.

Վարչությունը պարտավոր է վճարել փոխադրական փաստացի ծախսը գնալ-գալու համար բոլոր բանվորներին, այն դեպքում, յեթե նրանք ապրում են իրենց աշխատավայրից 3 կիլոմետր և ավելի հեռավորության վրա, յեթե նրանց բնակարան (հանրակացարան) չի տրամադրված:

§ 72.

500-ից և ավելի բանվորներ ունեցող մեծ ձեռնարկություններում և շենքերում վարչությունը պարտավոր է իր հաշվով պահելու հաստիքային աշխատակից՝ ազատված բոլոր կողմնակի աշխատանքներից, տեխնիկական անվտանգության հսկողության համար, վորը պետք է լինի տեխնիկական կրթությամբ:

Սոցկենցաղային խմբակի ներկայացուցիչները տեղկոմի պահանջով կարիք յեղած ժամանակ ազատվելու յեն աշխատանքից՝ աշխպաշտ-



պանության և տեխնիկական անվտանգության հարցը քննելու համար, ընդհանուր առմամբ վոչ ավելի 1 հոգուց ամսվա մեջ, 2 որ: Այդ որերի համար վարչությունը վճարելու յե ազատվածին իր միջին աշխատավարձի հաշվով:

## ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՏԵՂԿՈՄԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

§ 73.

Տվյալ ձեռնարկության մեջ միութենական աշխատանքներ կատարելու և միութենական մարմին պահպանելու համար, վարչությունը պարտավոր է հատկացնել բանվոր-ծառայողներին վճարած ամբողջ աշխատավարձի 1 տոկոսի չափով և բանվորների մեջ կուլտ կրթական աշխատանքներ տանելու համար հատկացնել 1,25 տոկոսի չափով, ընդամենը՝ 2,25 տոկոսի չափով, ռոճիկների վճարելուց հետո, վոչ ուշ 3 որից:

Ծանոթություն.—Սույն պարագրաֆում թված բոլոր մուծումները վարչությունը պարտավոր է վճարել, մուծելով այն տեղկոմի ընթացիկ հաշվին, կամ կանխիկ վճարելով նրան: Այդպիսիները տեղկոմի ներկայացուցիչներին վճարելիս, ամեն ան-

դամ պետք է պահանջել նրանից լիազորագիր, ստորագրված տեղկոմի մյուս յերկու անդամների կողմից և ստացողի ազգանունը, ստորագրության ձևը տեղկոմը կամ խմբկոմը ուղարկելու յեն վարչությանը:

§ 74.

Բացի թված ծախսերից, վարչությունը տրամադրելու յե նաև առանց վարձի տեղկոմին մի սենյակ լրիվ կահավորված (գրասեղան, աթոռներ, և այլն) վառելիք, լուսավորություն և հեռախոս: Բացի այդ, և սրահ՝ առնվազն ամիսը մի անգամ ընդհանուր ժողովներ հրավիրելու համար:

Բացի այդ, թե շենքում և թե հանրակացարանում վարչությունը պարտավոր է տրամադրել տեղկոմին հատուկ շենք, կահավորված լուսավորությամբ և վառելիքով, մասսայական խմբակային պարապմունքների համար, և տրամադրել կահավորված ակումբ:

§ 75.

Խորհրդային, կուսակցական, կոոպերատիվ, պրոֆեսիոնալ և այլ հասարակական մարմինների կողմից հրավիրված՝ համագումարներին, կոնֆերանսներին, պլենումներին և լիազորական ժողովներին մասնակցելու համար ընտրված բոլոր պատգամավորների աշխատա-



վարձը, նրանց տևողության ամբողջ ժամանակամիջոցում վճարելու յե վարչությունը, ընտրված պատգամավորների աշխատավարձի միջին հաշվով:

Բրիգադի մեջ ընտրված բանվորներին նույնպես վճարվելու յե միջին աշխատավարձի հաշվով, բրիգադի մեջ աշխատելու ժամանակամիջոցի համար:

# ՄԱՍ 12

## ՃԱՐՏԱՐԱԳԵՏ-ՏԵԽՆԻԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

§ 76.

Հավաքական պայմանագրի այս մասը տարածվում է ճարտ.-տեխնիկների բոլոր տեսակի պաշտոնյաների վրա, վորոնք նախատեսված են ճՏ աշխատանքների տարիֆային տեղեկատվով:

Ծանոթություն.— Վարչատեխնիկական ղեկավարող պաշտոնների համար (աշխղեկ և բարձր պաշտոններ) թեկնածուներ է առաջարկում միությունը, ըստ վերում նրանց ընդունելու վերջնական վորոշումը թողնվում է վարչությանը:

§ 77.

Ճարտ. տեխնիկ. աշխատավորներին աշխատանքից հեռացնելու դեպքում, համաձայն Աշխօրենսգրքի 47–րդ հոդվածի «Ա», «Բ» կետերի, պետք է նախազգուշացնել գրավոր ձեվով մի ամիս առաջ. իրենց ցանկությամբ հեռանալու դեպքում ճարտ. տեխնիկ. աշխատավորը պարտավոր է մի ամիս առաջ հայտնել վարչությանը՝ գրավոր ձեվով: Միաժամանակ՝ վարչությունն այս մասին պետք է հայտնի Աշխժողկոմատին:

§ 78.

Ճարտ. տեխնիկական աշխատանքների վարձատրության չափը սահմանվում է կառուցողների կենտկոմի 1930 թ. հրատարակված տարիֆային տեղեկատվով, համաձայն նրանց տարիֆային ցանցի հարաբերականի 1: 4 հետևյալ համեմատական կարգով:

| Կարգ. | կոեֆ. | Կարգ. | կոեֆ. |
|---|---|---|---|
| 1 . . . . . | 2,00 | 9 . . . . . | 1,0 |
| 2 . . . . . | 2,20 | 10 . . . . . | 1,10 |
| 3 . . . . . | 2.40 | 11 . . . . . | 1,20 |
| 4 . . . . . | 2,60 | 12 . . . . . | 1,30 |
| 5 . . . . . | 2,85 | 13 . . . . . | 1,40 |
| 6 . . . . . | 3,15 | 14 . . . . . | 1,55 |
| 7 . . . . . | 3,50 | 15 . . . . . | 1,70 |
| 8 . . . . . | 4.00 | 16 . . . . . | 1,85 |

Ինժ. տեխ. աշխատավորների տարիֆային



կարգի ամսական ռոճիկը սահմանվում է 125 ռուբ.:

Կարգերի բաժանումը ըստ պաշտոնների կատարում է վարչությունը. կարգերի բաշխումից առաջացրած կոնֆլիկտները քննում է ԳԿՀ-ն, հրավիրելով ճարտ– տեխն. սեկցիայի ներկայացուցիչներին:

Այն պաշտոնները, վոր չեն նախատեսված կառուցողների կենտկոմի կազմած ցուցակի մեջ այս կամ այն ճարտարապետ–տեխնիկի համար, վորոշում է ԳԿՀ-ն, համապատասխան տվյալ անձի աշխատանքի բնույթի, նիկի համար, վորոշում է ԳԿՀ-ն համապատասխան տվյալ անձի աշխատանքի բնու. Ըլ. դասելով նրան տարիֆ. տեղեկատվով նախատեսված պաշտոններից մեկի կարգում:

§ 79.

Տեխնիկական, արտադրական և տնտեսական նվաճումների համար ճարտ. տեխ. աշխատավորը պարգևատրվելու յե աշխատանքի պաշտպանության խորհրդի 1929 թ. հունվարի 1-ի հրահանգի համաձայն:

§ 80.

Ճարտ. տեխ. աշխատավորների ընդունելությունը, տեղափոխելը և աշխատանքից հեռացնելը կատարում է վարչությունը, հայտնելով այդ մասին բանկոմին և ՃՏՍ-ին մաս–

նակից դարձնելով ճարտ. տեխնիկական ուժե-րին ռացիոնալ կերպով դասավորելու այս կամ այն պաշտոնում:

ՃՏՍ-ն իր հերթին պարտավորվում է աջակ-ցել վարչությանը ճարտ. տեխ. կադրերը հա-մապատասխան ձևով օգտագործելու համար:

Վարչությունը, բանկոմը և ՃՏՍ-ն պար-տավոր են պարբերաբար պայքարել բանուժի և ճարտ. տեխ. հոսունության դեմ:

§ 81.

ա) Չչափավորված բանվ. օր ունեցող աշ-խատող ճարտ. տեխնիկներին միության և վարչության համաձայնությամբ տրվելու են, համաձայն արձակուրդ գնացողի բեռնվածու-թյան, 3-շաբաթից մինչև մեկ ամիս հաշվելով նրա մեջ իր հերթական արձակուրդը ևս (տես կցված ցուցակը):

բ) Ցեխի պետը, վարպետները և օգնական-ները առողջության համար վտանգավոր պայ-մաններում աշխատելու դեպքում, ստանում են վնասը չեզոքացնող միջոցներ և արձակուրդ նույն ցեխի բանվորներին հավասար:

§ 82.

ՃՏՍ-ի աշխատանքներում նորմալ պայման-ներ ստեղծելու համար վարչությունը մինչև փետրվարի 1-ը պարտավոր է իրեն հաշվին տրամադրել նրանց աշխատանքի սենյակ, կա-



հավորված, լուսավորությամբ և ջեռուցմամբ, իրեն վրա վերցնելով նաև այդ սենյակի պահ-պանելու և պարբերաբար մաքրելու ծախսերը:

Ճարտ. տեխնիկ. աշխատավորներին թույ-լատրվում է իրենց ազատ ժամերին օգտվել արտադրական գիտական փորձերով՝ արխիվ-ներից, թանգարաններից և լաբորատորիա-ներից, այն պայմանով, որ իրենց նորմալ աշխատանքները չտուժեն:

§ 83.

Ճարտ. տեխնիկների որակի բարձրացման համար վարչությունը պարտավոր է՝

ա) Գործուղել նրանց լրացուցիչ կերպով վերաորակավորվելու՝ համապատասխան դաս-ընթացներ, տեղական ՃՏՍ-ի հետ համաձայ-նության գալով վերապատրաստման ուղարկ-վելիք թեկնածուների թվի և անձնավորու-թյունների մասին:

բ) Իր հաշվին գործուղել 3 հոգու՝ միու-թյան շինարարության զանազան վայրերը գի-տական էկսկուրսիաներ կատարելու համար.

գ) Իր հաշվին գործուղել ճարտ. տեխնիկ-ներին գիտական տեխնիկական համագումար-ներին և խորհրդակցություններին մասնակցե-բոլոր նման գործուղումների ժամանակ ու-ղարկվածի միջին աշխատավարձը պահպան-վում է:

գ) Կազմակերպել տեխնիկական գրադարաններ և գոյություն ունեցածները նոր տեխնիկական գրքերով, լրացնել, վորպեսզի ճարտ. տեխնիկները ոգտվեն այդ գրադարանից:

ե) Թույլ տալ ճարտ. տեխնիկ աշխատավորներին իրենց ազատ ժամերին ոգտվեն ձեռնարկություններում յեղած գրադարաններից, լաբորատորիաներից և տեխնիկներից:

Համաձայն սույն պայմանագրին կցված ցուցակի, վարչությունը պարտավոր է տալ ինժ. տեխնիկներին և բանվորներին արտահագուստներ:

ՃՏՍ-ն միության հետ միասին պարտավոր է աշխատանքներ տանել՝ ճարտ. տեխնիկներին ամրացնելու աշխատանքներին, մինչև շինության ավարտելը, կամ 5-ամյակի վերջը:

Վարչությունը պարտավոր է համապատասխան գումարներ հատկացնել պարգևատրելու ՃՏՍ այն աշխատավորներին, վորոնք շինարարության մեջ ռացիոնալիզատորական աշխատանքների նոր մեթոդներ և ձևեր կմտցնեն:

## ՄԱՍ 13
## ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀՈԴՎԱԾՆԵՐ

### § 84.

Վարչությունը պարտավոր է հատկացնել համապատասխան գումար պարգևատրելու



ՃՏՍ, այն աշխատավորներին, վորոնք շինարարության մեջ կմտցնեն ռացիոնալիզատորական աշխատանքների նոր մեթոդներ և ձևեր:

Վարչությունը պարտավոր է մշակել ներքին կարգապահության կանոններ, յելնելով Աշխժողկոմատի կողմից հաստատված որինակելի նախագծից և յելնելով տեղական պայմաններից, մտցնել համապատասխան լրացումներ, վորից հետո համաձայնեցնել միության հետ: Ներքին կարգապահության նախատեսված պայմանները կյանքում կիրառվելու յեն Աշխժողկոմատի կողմից հաստատվելուց հետո:

### § 85.

Սույն պայմանագրի տպագրման հետ կապված բոլոր տեսակի ծախսերը կատարվելու յեն վարչության հաշվին, բացի դրանից վարչությունը պարտավոր է սույն պայմանագրից, փոքրիկ գրքույկների ձևով տպագրել 20 որինակ ռուսերեն լեզվով, 150 որինակ հայերեն լեզվով, բաժանել բոլոր բանվորների մեջ—

ձրիաբար:

ա) Բազմացնել գնացուցակները բրոշյուրների ձևով 500 որինակ և բաժանել ամեն մի բրիգադի ներկայացուցչի համար մեկական որինակ:

բ) Վճարել պայմանագրի կնքելու և գրանցելու բոլոր ծախսերը:

## § 86.

Պայմանագիրը ստորագրելու ժամանակ աշխատում էյին բանվոր . . . . հոգի, ծառայողներ . . . . հոգի, ընդամենը 2000 հոգի:

Կառուցումների Կենտրոնավարչության արտադրական և աշխատավարձի սեկտորի վարիչ՝ ՅԵ. ՄԱԼԽԱՍՅԱՆ

Ջարդեխի Վարչության պետի տեղակալ՝ ԱՂԱՄԱԼՅԱՆ

4/2—31 թ.

---



## ՑՈՒՑԱԿ

Վտանգավոր աշխատանքներում աշխատող բանվոր-ծառայողների, որոնց տրվում է լրացուցիչ արձակուրդ (Համաձայն պայմանագրի կետ § 63. ծան. 3):

## 1. ԹՈՒՆԵԼՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ

1. Ծակողներ (բուրիլշիկի).
2. Զարյադչիկներ.
3. Կրեպիլշչիկներ.
4. Զապալշչիկներ.
5. Սակալչիկներ (սակալչիկի).
6. Թունելներում աշխատող այլ բանվորներ:

## 2. ՏՐԱԿՏՈՐՆԵՐԻ ՎՐԱ ԱՇԽԱՏՈՂ ՇՈՖԵՐՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ՕԳՆԱԿԱՆՆԵՐԸ

## 3. ԳԱՋԻ ՅԵՎ ԿՐԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Աղացարանների վրա աշխատող բանվորներ.
2. Բեռնող և դատարկող բանվորներ.
3. Պահեստներում աշխատող բանվորներ.
4. Գաջի գործարանի բանվորներ:

## 4. ԳՐԱՆԻՏԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Պերֆերատորների վրա աշխատող բանվորներ.

2. Մեխանիզացիայի ենթարկված ստանոկների վրա աշխատող բանվորներ (բրուսչատկաներ կտրող).

3. Մեքենայական գործիքներով բրուսչատկաների վրա աշխատող բանվորներ.

4. Մեքենայացման ենթարկված արհեստանոցներում աշխատող բանվորներ:

## 5. ՑԵՄԵՆՏԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՇԽԱՏՈՂ ԲԱՆՎՈՐՆԵՐ

1. Աղացող բանվորներ.

2. Պտտվող վառարանի վրա այրող բանվորներ.

3. Բեռնող բանվորներ, վորոնք մշտապես զբաղված են շախտային գոյգնեյդեր վառարանների վրա, կրաքար:

4. Գոֆմանի բեռլեցի վառարաններում դասավորող բանվորներ.



## 6. ՌՈՄՆԱԿԱՆ ՑԵՄԵՆՏԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Շախտինսկի վառարանի բեռնող և թափող բանվորներ.

2. Կեսոնի աշխատանքների (աշխատանք ջրի մեջ) վրա զբաղված բանվորներ.

3. Բանվորներ, վորոնք զբաղված են ներկարարային աշխատանքներով (մետաղի, փայտի կամ շինանյութերի վրա) և յեթե գործադրում են ավելցուկներ:

## 7. ԳՒԴՐՈՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

1. Բոլոր բանվորները, վորոնք կատարում են գւդրոնի և ասֆալտի աշխատանքներ:

Ստորագրություններ՝

6/2—31 թ.

# ՑՈՒՑԱԿ

Չչափավորված աշխատանքի որ ունեցող աշխատակիցների (կետ·····)

1. Աշխատանքի ղեկավարները և նրանց օգնականները.
2. Գլխավոր ճարտարապետները և նրանց օգնականները.
3. Արտադրության վրա դրված բոլոր ճարտարապետ-տեխնիկները.
4. Բոլոր բաժինների և կենտրոնի վարիչները և նրանց օգնականները.
5. Գլխավոր հաշվապահները և նրանց օգնականները.
6. Հաշվապահները.
7. Տնտեսական մեխանիկները.
8. Պահեստների վարիչները և պահեստապետները.
9. Էքսպեդիտորները.
10. Արտելչիկները (շրջիկ գանձապահներ).
11. Շոֆերները և նրանց օգնականները.



12. Ֆուրգոնչիները և կառապանները.
13. Իրավախորհրդատուներ.
14. Գործերի վարիչները կամ նրանց փոխարինող քարտուղարները.
15. Տրանսպորտի վարիչը.
16. Վարչության հրահանգիչները.
17. Ավագ ճարտարապետները:

Ստորագրություններ՝

# ՑՈՒՑԱԿ

Այն աշխատակիցների, վորոնք ոգտվում են լրացուցիչ արձակուրդ ստանալու իրավունքից (կետ § 63) ծանոթություն 1.

1. Դիրեկտորին—տարեկան մեկ ամսվա արձակուրդ.

2. Նրա ոգնականներին՝ նույնպես.

3. Արտադրական բաժնի վարիչին՝ մեկ ամիս.

4. Գլխավոր ճարտարապետ. մեկ ամիս.

5. Բաժնի վարիչներին և չերտժ. վարիչն. մեկ ամիս.

6. Գլխավոր հաշվապահներին և նրանց տեղակալներին մեկ ամիս.

7. Հաշվապահներին 18 բանվորական որ. (արտադրության մեջ աշխատող հաշվապահներին մեկ ամիս).

8. Աշխղեկներին մեկ ամիս.

9. Աշխղեկների ոգնականներին մեկ ամիս.

10. Արտադրության վրա անմիջականորեն զբաղված ճարտ. տեխնիկ. մեկ ամիս.

11. Մեքենագրուհիներին 18 բանվորական որ.

12. Պահեստապետ-էքսպեդիտորներին՝ 18 բանվորական որ.



13. Շոֆերներին, տրակտորիստներին և նրանց ոգնականներին մեկ ամիս.

14. Կասսապաններին 18 բանվորական որ.

15. Ցենտ-ագիյա. Շին մեձակագիրներին մեկ ամիս.

16. Արտելչիկներին (շրջիկ գանձապահներին) 18 բանվորական որ.

17. Էքսպեդիտորներին՝ 18 բանվորական որ.

18. Գործերի վարիչներին, 18 բանվորական որ.

19. Իրավախորհրդատուներին մեկ ամիս.

20. Տասնապետներին և բրիգադիրներին 18 բանվորական որ.

21. Պատասխանատու հրահանգիչ. մեկ ամիս.

22. Տրանսպորտի վարիչ 18 բանվորական որ.

23. Տարիֆիկատոր. 18 բանվորական որ:

Ստորագրություններ՝

6/2—31 թ.

# 7. ԳԻԴՐՈՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ

1. Բոլոր բանվորները, վորոնք գիդրոնի և ասֆալտի աշխատանքներ են կատարում

## ՑՈՒՑԱԿ

Այն արհեստի բանվորների. վորոնք աշխատում են իրենց գործիքներով և վորոնց գործիքների մաշման համար տրվում է դրամական փոխհատուցում հետևյալ չափով (կետ )

| | | | |
|---|---|---|---|
| 1. | Վորմնադիր քարտաշ | 1 | ռուբլի |
| 2. | Վոմնադիրներին | $\frac{1}{3}$ | » |
| 3. | Քարտաշներին | 1,5 | » |
| 4. | Ավագչիներին | $\frac{1}{4}$ | » |
| 5. | Ներկարարներին | 1 | » |
| 6. | Թիթեղագործներին | $\frac{1}{2}$ | » |
| 7. | Ասֆալտագործներին | $\frac{1}{4}$ | » |
| 8. | Բարձունքի քար կտրող բանվոր. | $1\frac{1}{2}$ | » |
| 9. | Շերին ջարդող բանվորներին | $\frac{1}{4}$ | » |
| 10. | Ապակի կտրողներին | 1 | » |
| 11. | Թզարչիներին | 1 | » |
| 12. | Վառարանագործներին | $\frac{1}{4}$ | » |
| 13. | Փականագործներին և ջրմուղ անցնող փականագործներին | $1\frac{1}{2}$ | » |
| 14. | Դարբիններին | $1\frac{1}{2}$ | » |
| 15. | Հյուսներին | 1 | » |
| 16. | Ատաղձագործ. և հյուսներին | $1\frac{1}{4}$ | » |
| 17. | Ատաղձագործ. մեխանիկացիայի յենթարկված արհեստանոցներում աշխատելու դեպքում | 1 | » |
| 18. | Արմատուրշչիկներին | $1\frac{1}{2}$ | » |



Ստորագրություններ՝

---

## ՑՈՒՑԱԿ

Այն անձանց, վորոնց Վարչությունը կարող է ընդունել գործի, առանց Բիրժայի և Աշխժողկոմատի Կադրերի Վարչության, համաձայն կոլ. պայմանագրի § 11.

1. Բաժնի վարիչներ.
2. Ցե|Բաժնի վարիչներ.
3. Նրանց օգնականներ.
4. Ավագ մանտյորներ.
5. Գլխ. հաշվապահներ.
6. Եկոնոմիստներ, իրավախորհրդատուներ.
7. Պահեստապետներ և օգնականներ.
8. Առաջ քաշված բանվորներ.
9. Ագենտ սրխամշչիկներ.
10. Եքսպեդիտորներ:

Ստորագրություններ՝

---

# ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

## ՉՈՐԱԳԵՍԻ-ՔԱՆԱՔԵՌԳԵՍԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՑԵՎ. ՇԻՆ. ՄԱՍԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

## 1- ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ

1. Ներքին կարգապահական կանոնները և կարգապահական պատիժների ցանկը նպատակ ունեն շինարարության մեջ սահմանել կարգ, վորը պետք է ապահովի՝

ա) Աշխատանքի մեթոդների և ձևերի սոցիալիստական կազմակերպման և բանվորական կոլեկտիվի ու նրա առանձին անդամների սոցիալիստորեն (աշխատանքին) մոտեցումը (սոց. մրցում, հարվածայնություն, բրիգադներ հանդիպական պրոմֆինպլան, հասարակական բուկսիր և այլն):

բ) Զորագես–Քանաքեռստրոյի, ամբողջությամբ կամ նրա առանձին շինարարական մասերի աշխատանքների նորմալ ընթացքը, փոխադարձ շաղկապը աշխատանքների և գործողությունների բոլոր բնագավառում:



գ) Աշխատանքի ռացիոնալ օգտագործումը:

դ) Աշխատանքի դիսցիպլինայի ուժեղացումը: Բանվորներին արտադրության մեջ ամրացնելը:

ե) Հիմնարկ–ձեռնարկության աշխատանքների վարումը, միանձնյա ղեկավարության սկզբունքով:

2. Ներքին կարգապահական կանոնները պարտադիր են Զորագես–Քանաքեռգեսի շինարարական մասերի և Վարչության բոլոր բանվորների ու աշխատակիցների և ադմինիստրացիայի համար:

Կարգապահական կանոնների խախտում կատարելիս, աշխատակիցը յենթարկվում է՝ կարգապատժի, համաձայն սույնին կցված կարգապահական պատիժների ցանկի:

3. Վոչ վոք չի կարող արդարանալ կանոնները չիմանալու պատրվակով:

## 2. ԱՇԽՎԱՐՁՈՒՄ

4. Վարչությունը նոր բանվոր–ծառայողների ընդունումը կատարում է համաձայն գործող օրենքների և կոլլեկտիվ պայմանագրի:

5. Վարչությունը կամ շինարարական մասերի պետերը պարտավոր են բանվոր–ծառա–

յող վարձելու կամ արձակելու դեպքում հայտնել տեղկոմ-գործարկոմին:

6· Նոր ընդունվողներին 7 որից վոչ ուշ տրվում ե հաշվեգրքույկ: Յերկու շաբաթից պակաս աշխատողներին, հաշվեգրքույկ չի տրվում:

## 3. ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՐ

7· Աշխատանքի տեվողությունը սահմանվում ե 8 ժամ շինարարության մեջ աշխատող բանվորների և ինժ.-տեխ. պերսոնալի ու ծառայողների համար և 7 ժամ վարչության գրասենյակային աշխատողների (հաշված կես ժամվա ընդմիջումը):

8· Աշխատանքը Ձորագես-Քանաքեռգեսի Վարչությունում սկսվում ե առավոտյան ժամը 9-ին և վերջանում ե՝ 4-ին, իսկ շինարարական մասերում թողնել տեղերում համաձայնության գալու բանկոմ-խմբկոմների հետ:

9· Արտաժամյա աշխատանք չի թույլատըրվում: Որենքով նախատեսնված հատուկ, կարևոր դեպքերում, արտաժամյա աշխատանք կատարվում ե միայն ադմինիստրացիայի կարգադրությամբ և Աշխժողկոմատի թույլտվությամբ:

10· Աշխատակիցը իրավունք չունի հրաժարվելու կատարելուց Վարչության կամ նրա ներ-



կայացուցչի կարգադրությունը՝ արտաժամյա աշխատելու համար, սակայն յեթե աշխատակիցը այդ կարգադրությունը համարում ե վոչ իրավացի, չդադարեցնելով աշխատանքը, միաժամանակ հայտնում ե տեղկոմ-բանկոմին:

11· Ամենային աշխատանքի ժամանակ, աշխատակիցներից վոչ վոք իրավունք չունի հրաժարվելու նշանակված ամենայում աշխատելուց:

Հղի կանայք, անչափահասները (18 տ. ցածր) գիշերային աշխատանքների չեն թույլատրվում:

7 ժամյա բանվորական որվա անցնող շինարարական ոբյեկտներում հղի կանայք գիշերային աշխատանքի չեն թույլատրվում, սկսած հղիության 6-րդ ամսից, իսկ կրծքով կերակրող կանայք—կերակրելու առաջին վեց ամսվա ընթացքում:

12· Անհատորեն ամենային աշխատանք կատարողն աշխատանքից իրավունք չունի հեռանալ (թեկուզ ժամանակը լրացած լինի) մինչև փոխարինողի գալը: Փոխարինողը ժամանակին չգալու դեպքում, փոխարինվողը պարտավոր ե հայտնել ադմինիստրացիային և առանց վերջինի թույլտվության, իրավունք չունի աշխատանքը թողնել:

Ադմինիստրացիան կամ նրա ներկայացուցիչը պարտավոր է շտապ միջոցներ ձեռք առնել փոխելու տվյալ աշխատակցին ուրիշով:

## 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԱԼՈՒ ՅԵՎ ԳՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ

13. Աշխատանքից հեռանալը թույլատրվում է միայն սահմանված ժամերին:

14. Բոլոր աշխատակիցները պարտավոր են աշխատանքի վրա գալ ու գնալ՝ աշխատանքները սկսելու և վերջանալու (կամ սմենաների) ճիշտ սահմանված ժամերին:

15. Սահմանված ժամանակից ուշանալու դեպքում, ուշացող աշխատակիցը գործի է անցնում միայն ադմինիստրացիայի թույլտվությամբ:

Ուշացումները առանձին հաշվի յեն առնվում:

16. Աշխատանքից ժամանակից շուտ գնալու պահանջի դեպքում, աշխատակիցը պարտավոր է հայտնել ադմինիստրացիային (աշխղեկավարին) և ստանալ համապատասխան թույլտվություն:

Աշխատանքի չներկայացումը կամ թույլտվության վերցնումը (հիվանդության պատճառով), այն դեպքում է համարվում հիվանդ, յերբ այդ ակնհայտ է վարչության համար կամ հաստատված է լինում բժշկի կամ բուժհիմնարկի



կողմից: Համապատասխան փաստաթղթի չներկայացնելու դեպքում բացակայության ժամանակը համարվում է պրոգուլ:

17. Յեթե աշխատակիցը վորևէ պատճառով աշխատանքի ներկայանալ չի կարող, պարտավոր է նույն օրը հայտնել Վարչությանը կամ շինմասի ղեկավարին, իսկ յեթե պատճառը, վորի հետևանքով աշխատակիցը աշխատանքի չի ներկայացել, անակնկալ է, նա պարտավոր է այդ մասին հայտնել ադմինիստրացիային հաջորդ օրը: Համապատասխան հիմնավորված բացատրություն չներկայացնելը համարվում է պրոգուլ:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՅԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

18. Ձորագես–Բանաշինստրոյի Վարչությունը պարտավոր է շինարարական առանձին մասերում և վարչության դրասենյակում ունենալ արկղներ՝ աշխատանքների ռացիոնալացման և կազմակերպման առաջարկությունների համար և միաժամանակ փակցնել հայտարարություն այդ առաջարկությունների ընթացք տալու կարգի մասին:

19. Յուրաքանչյուր նոր ընդունվող աշխատակից ստանում է, համաձայն Աշխժողկոմատի վորոշման և կոլեկտիվ պայմանագրի՝ ան-

հրաժեշտ գործիքներ, մասնագիտական հագուստ և այլն:

20. Զորագես–Բանաքեստրոյի Վարչությունը պարտավոր է տեղ հատկացնել՝ գործիքների, մասնագիտական հագուստի և այլ պահելու համար, առանձին փակ արկղներ կամ պահարաններ, վորտեղ աշխատակիցներին հանձնված իրերը փչանալուց պահպանված կմնան:

Աշխատակիցները պարտավոր են աշխատանքները վերջացնելուց հետո, մասնագիտական հագուստը հանձնել հանդերձապահին:

21. Աշխատակիցները պարտավոր են՝ գործիքների, մասնագիտական հագուստի պահելու առթիվ Վարչության սահմանած կանոնները պահպանել:

Չի թույլատրվում հանձնել այլ անձանց կամ ուրիշ մասի աշխատակցին, նաև առանց Վարչության համաձայնության տուն տանել գործիքներ և մասնագիտական հագուստը:

22. Մասնագիտական հագուստի լվանալը, վերանորոգելը կատարվում է՝ Զորագես–Բանաքեստրոյի Վարչության հաշվին:

23. Վարչության պահանջմամբ աշխատակիցը պարտավոր է մասնագիտական հագուստը հանձնել՝ ա) լվանալու, բ) վերանորոգելու, գ) փոխարինելու (ժամանակը լրանալուց



հետո), դ) բանվորական որը վերջանալուց հետո և ե) գործից հեռացնելուց հետո:

24. Յուրաքանչյուր աշխատանք (անհատական, բրիգադային, գործարքային և արտակարգ) կատարվում են աշխատակիցների կողմից, համաձայն Վարչության ցուցմունքի և տրված նարյադի:

Նարյադում պետք է մանրամասնված լինի աշխատանքի կատարման ժամանակը, աշխատանքը (ինչ աշխատանք պետք է կատարվի), գործարքային գնահատումը և այլն:

25. Մեքենաները և սարքերը աշխատանքի սկզբին պետք է լինեն միանգամայն կարգի գցված: Մեքենա կամ սարք փչանալու դեպքում, աշխատակիցը պարտավոր է անմիջապես դադարեցնել աշխատանքը և հայտնել Վարչության ներկայացուցչին (աշխղեկավարին):

26. Աշխատանքների դադարեցումը՝ մեքենաների փչանալու կամ ժամանակին գործիքներ, նյութ չհասցնելու պատճառով, համարվում է վորպես պրոստոյ և վարձատրվում է համաձայն Աշխժողկոմատի վորոշման և կոլպայմանագրի:

27. Աշխատակիցներին Վարչությունը ժամանակին է մատակարարում գործիքներով և նյութերով:

28. Աշխատակիցը պարտավոր է աշխատանքը կատարել սահմանված և իրեն հայտնված նորմայի և գնահատման համաձայն. աշխատանքից հրաժարվել չի թույլատրվում, յեթե աշխատակիցը սահմանված նորմայի և գնահատման հետ համաձայն չէ. այս դեպքում նրան իրավունք է տրվում բողոքել Գ.Կ.Հ.-ին վարչության կողմից սահմանված նորմաների դեմ:

29. Յուրաքանչյուր ավարտած աշխատանք ընդունվում է և նշանակվում նարյադի մեջ:

## 6. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

30. Վարչությունը, տեխնիկական պերսոնալը և աշխատակիցները պարտավոր են ճիշտ կերպով հետևել անվտանգության համար սահմանված կանոններին:

Բոլոր տեղերում, վորտեղ վտանգ է սպառնում աշխատակիցների կյանքին և առողջությանը, փակցվում է համապատասխան բացատրություն, մեծ տառերով:

Տեխնիկական անվտանգության կանոնները փակցվում են բոլոր ցեխերում, շինմասերում և այլն:

31. Արգելվում է՝

ա) Ինքնակամ, անկախ սահմանված կարգի մեքենան գործի գցել.



բ) Գործի գցված մեքենան անհսկողության և անուշադրության մատնել.

գ) Առանց թույլատվության օգտվել այնպիսի մեքենաներով և գործիքներով, վորոնք հարմարեցված չեն տվյալ աշխատանքին.

դ) Աշխատել փչացած մեքենաների վրա, առանց աշխղեկավարի թույլտվության.

ե) Կատարել մեքենայի նորոգում՝ գործի գցված ժամանակ:

32. Աշխատանքի ժամանակ, աշխատակիցները պետք է օգտվեն մասնագիտական հագուստով: Ադմինիստրացիան պետք է հսկի, վոր աշխատակիցները գործի անցնեն մասնագիտական հագուստով:

33. Աշխատակիցները վերքեր ստանալու դեպքում, անհրաժեշտ բուժ օգնություն ըստանում են առաջին բուժօգնության պունկտից, վորպիսին կազմակերպվում է հիմնարկության կողմից շին- մասում:

34. Շինարարական մասերում հեղեղ, հրդեհ ծագելու դեպքում, կամ յեթե այդպիսին ծագում է մոտակա վայրում, վտանգի տակ դընելով շինարարության գույքը, աշխատակիցները պարտավոր են բոլոր միջոցները ձեռք առնել կասեցնելու այդ:

35. Զորագես-Քանաքեռստրոյի վարչությունը պարտավոր է՝ աշխբնակարաններում ըն-

վացվելու համար ունենալ՝ լվացարան, օճառ և յերես-սրբիչ. բացի այդ, մաքուր բաքի մեջ՝ խմելու ջուր (յեփած):

## 7. ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՎՃԱՐՈՒՄԸ

36. Աշխատավարձը վճարվում է ամիսը 2 անգամ, 10-ին և 25 յուրաքանչյուր ամսվա (ըստ կոլ. պայմանագրի):

Աշխատավարձի վճարումը կատարվում է աշխատանքի ժամերին, առանց խախտելու աշխատանքի ընթացքը:

## 8. ՀԱՆԳՍՏԻ ՕՐԵՐԸ

37. Աշխատակիցների արձակուրդները դասավորում է ադմինիստրացիան, հաստատում է Գ.Կ.Հ.-ն և հետո ցուցակը փակցվում է աչքի ընկնող տեղում:

Այն աշխատակիցները, վորոնք ցանկանում են իրենց արձակուրդները փոխել, գրավոր դիմում են Վարչությանը:

38. Արձակուրդները տրվում են՝ համաձայն կոլեկտիվ պայմանագրի:



# ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԻԺՆԵՐԻ ՑԱՆԿ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

Աշխատանքի կարգապահությունը կայանում է՝ աշխատակցի կողմից, վորպես Խ.Ս.Հ.Մ.-ում սոցիալիստական շինարարության մասնակցողի, աշխատանքին բարեխղճորեն և նվիրված վերաբերվելու և իրա վրա թե հավաքական պայմանագրով և թե աշխատանքային կարգապահության կանոններով դրված պարտականությունների լիակատար կատարման մեջ:

1. Կատարելով իր աշխատանքները, աշխատակիցը միաժամանակ կարող է առաջարկություններ մտցնել (Վարչության քննությանը) աշխատանքները ավելի ռացիոնալ կատարելու, արտադրողականությունը բարձրացնելու մասին:

2. Ձորագես-Քանաքեռստրոյի Վարչությունը պարտավոր է բոլոր միջոցները ձեռք առնել [illegible]վելու համար՝

ա) Ստեղծել նպաստավոր պայմաններ, ուժեղացնելու և ամրացնելու աշխատակիցների կողմից կազմակերպված աշխատանքի սոցիալիստական մեթոդները և ձևերը (սոցմրցում, հարվածայնություն, հանդիպական պրոմֆինպլաններ, հասարակական բուկսիր և այլն).

բ) Իրեն—Վարչության կողմից ընդունված, արտադրական խորհրդակցությունների, անհատ աշխատակիցների կամ մի խումբ աշխատակիցների կողմից առաջադրած բոլոր ձեռնըտու և օգտավետ առաջարկությունների օգտագործումը և կիրառումը.

գ) Աշխատանքի և կենցաղի առողջ պայմաններ ստեղծելը:

3. Աշխատանքային կարգապահությունը խախտելու դեպքում, աշխատակիցները յենթարկվում են հետևյալ կարգապատիժների՝

ա) Նախազգուշացում, հայտարարելով այդ մասին Վարչության գրասենյակում կամ շին մասում, տեղեկացնելով միաժամանակ տեղկոմ-բանկոմին: Նախազգուշացումը նշանակվում է աշխատանքային ցուցակի մեջ.

բ) Նկատողություն, հայտարարելով աշխատանքի վայրում և տեղեկացնելով տեղկոմ-բանկոմին:

գ) Սիստեմատիկ և չարակամ մտադրու-



թյամբ աշխկարգապահությունը խախտելու դեպքում ազատվում է աշխատանքից, առանց նախազգուշացման և լուծարքային հատուցման:

Նույն պատժին է յենթարկվում, յեթե խախտման մեջ նկատվում է քրեական մոտիվ:

դ) Կազմակերպվում է ընկերական դատ:

4. Կարգապահական պատիժը նշանակելով՝ Վարչությունը կամ շին–մասերի ադմինիստրացիան հաշվի յե առնում տվյալ աշխատակցի մեղավոր լինելու աստիճանը, աշխկարգապահության կանոնների խախտման մեջ:

5. Կարգապահական պատիժը տալուց առաջ, Վարչությունը կամ նրա ներկայացուցիչը (շին մասերում), պետք է պահանջի աշխատակցից գրավոր կամ բանավոր բացատրություն: 3 օրվա ընթացքում աշխատակցից բացատրություն չստանալու դեպքում, ադմինիստրացիան իրավունք ունի կարգապատիժը տալ:

6. Կրկնակի և սիստեմատիկ կերպով աշխկարգապահությունը խախտելու համար կարգապատիժ սահմանելիս, ադմինիստրացիան պետք է հաշվի առնի վերջին 12 ամսվա ընթացքում յեղած բոլոր այն խախտումները, վորոնց համար աշխատակիցը կարգապատժի յե յենթարկվել: Պրոտոկոլները և ուշացումները հաշվի առնելիս, վերցնում են միայն վերջին մեկ ամիսը. սակայն, յեթե պրոտոկոլները

և ուշացումները կրկնվել են մի շարք ամիսների ընթացքում, այդ դեպքում նոր պրոգուլը կամ ուշացումը իրավունք է տալիս ադմինիստրացիային՝ նշանակել ցանկացած կարգապատիժ, համաձայնեցնելով տեղկոմ-ֆաբկոմի հետ:

7. Կարգապատիժը տրվում է աշխկարգապահության խախտումը հայտաբերված օրից վոչ ուշ քան 15 օրվա ընթացքում: Այդ ժամանակամիջոցից հետո կարգապատիժը արգելվում է տալ:

8. Կարգապատժի դեմ աշխատակիցը կարող է բողոքել նրա հայտարարման օրից սկսած 14 օրվա ընթացքում—Գ.Կ.Հ.-ին:

9. Պրոգուլների և ուշացումների համար կարգապատիժ նշանակվում է այն դեպքում, յերբ նրանք տեղի յեն ունեցել առանց հարգելի պատճառների:

Հարգելի պատճառներ համարվում են՝

ա) Աշխատակցի հիվանդությունը կամ նրա ընտանիքի անդամների ծանր հիվանդությունը և մահը, վորը պահանջում է աշխատակցի ներկայությունը:

բ) Կարանտին:

գ) Հրդեհի և հեղեղի ժամանակ:

դ) Աշխատակիցը (օրենքով նախատեսված)



իր քաղաքացիական և հասարակական պարտականությունները կատարելու ժամանակ:

ե) Ադմինիստրատիվ օրգանների կամ դատական մարմինների կողմից կանչվելու դեպքում:

զ) Հաղորդակցության ճանապարհների ընդհատման (գետերի բարձրանալը, բուք, գընացքի խորտակում և այլ) դեպքերում:

10 Աշխատակցի հարբած դրությամբ աշխատանքի գալը, անթույլատրելի վարքը, վոր խանգարում է աշխատանքների նորմալ ընթացքը (կռիվ, հայհոյանք, ադմինիստրացիայի ներկայացուցչին վիրավորելը) անկախ կարգապատժի և դատական պատասխանատվության յենթարկվելուց, յենթակա յե նաև աշխատանքից անմիջապես հեռացման, ընդ վորում բացակա օրը հաշվվելու յե վորպես պրոգուլ:

11. Յեթե աշխատակիցը կրճատվում է կարգապահական կանոնների խախտման հետևանքով, աշխատանքային ցուցակի մեջ կրճատման պատճառները նշանակվում են:

## 2. ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՐՎԱ ՈԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄԸ

ա) Ուշացում, կամ ժամանակին աշխատանքի չանցնելը, անգործ շրջելը, ուրիշ գործով զբ-

բացվելը, աշխատակիցներին խանգարելը:

բ) Ինքնակամ բացակայելը, ժամանակին աշխատանքի չվերադառնալը, աշխատանքից շուտ հեռանալը, պրոգուլներ, աշխժամերին քնելը:

գ) Առանց աշխղեկավարների թույլտվության այնպիսի աշխատանք կատարելը, վորը շինարարության կարիքների համար չէ, հաճախորդների ընդունումը վոչ պաշտոնական գործերով:

## 3. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄԸ

ա) Հարբած դրությամբ աշխատանքի գալը, վոգելից խմիչքներ բերելը և աշխատանքի ժամանակ խմելը, կռիվ, թղթախաղ՝ աշխատանքի ժամանակ կամ բանվորական բնակարաններում:

բ) Ինքնակամ իրեն ուրիշ աշխատակցով փոխարինելը:

գ) Ադմինիստրացիայի իրավացի կարգադրությունները, այն է՝ օրենքով և կոլպայմանագրով նախատեսված աշխատանքի կատարումից հրաժարվելը, նաև արտաժամյա և գիշերային աշխատանքների կատարումից հրաժարվելը:

դ) Օրենքով նախատեսված, ժամանակավորա



պես ուրիշ աշխատանքի փոխադրվելուց հրաժարվելը:

## 4. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄԸ

ա) Կատարված դժբախտ դեպքերի կամ վտանգի մասին անմիջապես վարչությանը չհայտնելը:

բ) Տեխնիկական անվտանգության նաև սանիտարական և գիգիենայի կանոնների խախտումը:

գ) Մեքենաների և գործիքների հետ վարվելու կանոնների խախտումը:

դ) Հակահրդեհային կանոնների չպահպանումը, անփույթ վերաբերմունք կրակի հետ, հեշտ վառվող նյութերի (լուցկի, բենզին և այլն) բերելը աշխատանքի այնպիսի վայրում, վորտեղ արգելված է:

## 5. ԱՆՓՈՒՅԹ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ ԴԵՊԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՅԵՎ ՇԻՆԱԲԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ

ա) Առանց հարգելի պատճառների, հանձնարարված աշխատանքի և նորմայի չկատարվելը:

բ) Մեքենաների, նյութերի կամ այլ գույքի փչացումը:

## 7. ԱՆԲԱՐԵԽԻՂՃ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ ԵՎ ԽՈՒԼԻԳԱՆԱԿԱՆ ԱՐԱՐՔՆԵՐ

ա) Աշխատանքի չներկայանալը, կամ ներկայանալու դեպքում աշխատանքի չանցնելը, աշխատանքից անժամանակ և անհիմն հեռանալը:

բ) Մասնագիտական հագուստով աշխատանքից դուրս պտտվելը, Վարչության պահանջմամբ, աշխատանքից հետո հետ չվերադարձնելը, սեփականացնելը:

գ) Խուլիգանական արարքներ, վիճաբանություններ աշխատանքի ժամանակ՝ աշխղեկավարի և իրար հետ:

դ) Նարյադները և այլն կեղծելը:

յե) Իրեն սեփական կարիքների համար շինարարության գույքի կամ յենթակա աշխատակիցների աշխատանքների օգտագործումը, գողությունը:

զ) Կեղծ հայտարարություններ (սիմուլյացիա) հիվանդության մասին, դիտամամբ վերքեր առաջացնելը՝ աշխատանքից ազատվելու համար::

—



## ԱՆԴՄԻՆԻՍՏՐԱՑԻՎ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԵՐՍՈՆԱԼԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄ՝ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐՄԱՆ ՅԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ՝ ՀԱՄԱՐՎՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՎՅԱԼՆԵՐԸ

ա) Անուշադիր և անփույթ վերաբերմունք, հարվածային բրիգադների աշխատանքներին, այն անհատ աշխատակիցներին, վորոնք մասնակցում են՝ սոցիալիստական մրցման, հանդիպական պրոմֆինպլանների և ընդհանրապես աշխատանքների կազմակերպման սոցիալիստական այլ ձևերին: Օժանդակություն ցույց չտալը բանվորական կոլեկտիվներին և անհատ բանվորներին, վերջինների կողմից կատարված աշխատանքների ռացարկում. միջոցներ ձեռք չառնելը ամրացնելու և օգտագործելու աշխատակիցների կողմից ձեռք բերած հաջողությունները և զարգացնելու բանվորների ինքնագործունեությունը:

բ) Անուշադիր և անփույթ վերաբերմունքը՝ բանվորական կոլեկտիվների արտադրական խորհրդակցությունների, և անհատ բանվորների առաջարկությունների և գյուտերի հան-

դեմ։ Օժանդակություն ցույց տալը այդ առաջարկությունների և գյուտերի մշակման և ձևակերպման հարցում և նրանից օգտավետները կյանքում կիրառելու համար։

գ) Միջոցներ ձեռք չառնելը, վերացնելու աշխատանքի աննորմալ պայմանները, անփույթ և անբավարար վերաբերմունք ցուցաբերելով մեքենաների կարգավորման, մասնագիտական հագուստի վոչ ժամանակին ձեռք բերելու և այլ հարցում։

դ) Աշխատակիցներին ժամանակին աշխատանք, նյութեր, գործիքներ չտալու դեպքում վոչ հարգելի պատճառով փչացած մեքենաների վրա աշխատանք նշանակելու դեպքում. աշխատակիցներին անորակ գործիքներ տալու դեպքում և նրանց ու նյութերի փչացումը չկանխելու դեպքում։

ե) Միջոցներ ձեռք չառնելը վերացնելու դժբախտ պատահարներ առաջացնող հանգամանքները, ապահովելու համար, աշխատանքների նորմալ ընթացքը։

զ) Միջոցներ ձեռք չառնելը՝ աշխատակիցների աշխատանքը ռացիոնալ կերպով օգտագործելու, աշխատակիցների վորակը բարձրացնելու, առաջ քաշելու ցածր պաշտոններից ավելի վորակավոր աշխատանքի։



է) Աշխատակիցների սխալ օգտագործումը (վոչ ըստ մասնագիտության և վորակի)։

ը) Պրոմֆինպլանով նախատեսված աշխատակիցների քանակից ավելի վերցնելը (բացի այն դեպքերից, յերբ աշխատակիցների ավելի լինելը բացատրվում է պրոմֆինպլանի գերակատարումով), բանվորական ավելորդ ուժի կուտակումը։

---

ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос библиотека
ՀՍՍՌ–Арм ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0196916

CA

2